Գիտություն

ՄԱՅԻՍ
№ 5
(318)
2018 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

Արարիչ Աստված հային շնորհել է կռվելու ու սխրանքի անօրինակ հատկությունը՝ մաքառել, հերոսանալ, երբ թշնամին սպառնում է մեր գոյությանը, և անպայման հաղթել, զի մեր կռիվը հանուն լինելիության է:

Ճակատագրի բերումով մայիսը դարձավ մեր հաղթանակների, մեր ապրելու իրավունքի, մեր անանց հպարտության, բերկրանքի, մեր փառապանծ գոյամարտերի, հաղթելու կամքի առհավատչյան: Մենք ուզում ենք մեր մայիսյան հաղթանակների փառաբանումը սկսել ամենավերջից՝ 1992 թվականի մայիսի 8-ից, երբ հայկական ուժերը գրավեցին Շուշին: Հաղթանակը Արցախյան ազատամարտում հիշարժան էր, պատմական ու խորհրդանշական. չէ՞ որ հայ ազատամարտիկները այդ սխրանքով վերահաստատեցին հայ զինվորի հաղթելու անկոտրում ոգին: Ամենախորհրդանշականը, պատմականը այդ գոտեմարտում եղավ մի իրողություն, որ հարյուրամյակներ շարունակ ճակատագիրը մեզ զրկել էր. հայը թշնամուց խլեց, իրեն վերադարձրեց կորցրած մեծ հայրենիքի մի կտորը: Հիրավի պատմական իրողություն:

Իսկ հիմա անդրադարձ մեր մայիսյան սխրանքների սկզբին. այն 451-ին էր, Ավարայրի դաշտում, երբ իրար բախվեցին պարսկական 300 - հազարանոց բանակը և 60 - հազարանոց հայկական ուժերը: Մեր պատմության մեջ այն Վարդանանց պատերազմի օրն էր, մեր անկարելի սխրանքի, անհուսալի կռվի ու «Մահ իմացեալի» համազգային հաղթանակի օրը: Ասում են, որ Ավարայրի ճակատամարտից հետո, հայերին հավատուրաց լինելու պարտադրող պարսից Հազկերտ արքան ասել է՝ «Հայե՛ր, կռվո՞ւմ եք, ապրեցե՛ք»: Ահա սրա համար է, որ մենք հպարտանում ենք՝ Ավարայրը համարելով մեր ժողովրդի, հայի բազկի հաղթանակի ճակատամարտ:

Մայիսյան մեր հաջորդ հաղթանակը 1918 թվականի մայիսին էր: Հայոց եղեռն իրագործած, հային հայրենիքից զրկած մարդակուլ օսմանը արշավեց իր հողի մի պատառիկի վրա ծվարած Հայաստան կոչվող երկրի վրա՝ իրագործելու իր մարդակուլ ծրագիրը՝ աշխարհի երեսից վերացնելու հայ ցեղն ու հայ անունը:

Ինչպես և 451-ին, թշնամին հզոր էր ու բազմաքանակ: Իրար հետևից հեշտությամբ գրավելով հայկական քաղաքները՝ թուրքական խորշակը հասավ Սարդարապատ կայարան: Մինչև Երևան մնում էր մի քանի ժամվա ճանապարհ: Ոչնչացման, անհետացման օրհասը կախվեց մեր թշվառ երկրի վերջին պատառիկի վրա:

Ուժերն անհավասար էին, հույսը մեռնում էր: Սակայն, ինչպես և Ավարայրում, բռունցքվեց հայ ժողովուրդը և հիշեց՝ «Հայե՛ր, կռվո՞ւմ եք, ապրեցե՛ք»: «Մահ իմացեալի» ոգին էր թևածում Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատներում:

Բոլոր ճակատներում հայերը պարտության մատնեցին թուրքական գերակշիռ ուժերին, որոնք խուճապահար փախուստի դիմեցին: Փառավոր հաղթանակ, որից չօգտվեցին Հայաստանի Ազգային խորհրդի ապիկարները:

...Եվ կրկին մայիս, երբ աշխարհին տիրելու նկրտումներով մի խելագար, որ ֆաշիզմ էր խորհրդանշում, 1945-ի մայիսի 9-ին ծնկի եկավ հակահիտլերյան կոալիցիայի առջև: Մարդկության պատմության այդ ամենաարյունալի, ամենադաժան ու աննախադեպ պատերազմի գլխավոր ծանրությունն ընկավ Խորհրդային Միության ուսերին, երկիր, որի մի փոքրիկ և հպարտ մասն էինք մենք՝ հայերս: Այո՛, Մեծ հայրենականը նաև հայի պատերազմն էր: Պատերազմ այն թշնամու դեմ, որ ակտիվ մեղսակիցն էր Հայոց մեծ եղեռնի, որի դաշնակիցն էր մեր դարավոր թշնամի թուրքը, և որի արյունարբու հրոսակները սահմանի վրա սպասում էին Ստալինգրադի անկմանը, որ մտնեին Հայաստան և ի վերջո իրականացնեին իրենց դարավոր ճիվաղային ծրագիրը՝ մորթեին, ոչնչացնեին վերջին հային:

Մենք կռվում էինք մեր դարավոր թշնամու դեմ, մենք վրեժ էինք լուծում նույն թուրքից, որը բնաջնջեց միլիոնավոր անմեղ մարդկանց: Եվ ես համոզված եմ՝ Ստամբուլում և Բաքվում մեր դարավոր թշնամին՝ հալածված բորենու կատաղությամբ և գազանային ատելությամբ կրճտացնում է ատամները, երբ ամեն տարի մայիսի 9-ին հպարտությամբ տոնում ենք մեր հաղթանակի օրը:

Մեծ հայրենականը նաև հայ ժողովրդի գոյամարտն էր

(միմիայն վիճակագրություն)

Տողերիս հեղինակը մայիսի 9-ին թոռների հետ եղավ Հաղթանակի զբոսայգում: Ինձ չզարմացրեց ծաղկեպսակների և ծաղիկների առատությունը անմար կրակի մոտ: Պարզապես հպարտություն ապրեցի Անհայտ զինվորի գերեզմանին ակնածանքով խոնարհվող ջահել աղջիկների և տղաների համար, բազում երիտասարդ զույգերի համար, որոնք մանկասայլակներով, իրենց պստիկների հետ էին եկել այգի:

Ես ակամա հիշեցի ՀՀՇ-ական պարագլուխների բնութագրումները Մեծ հայրենականին, արհամարհանքը պատերազմի վետերանների նկատմամբ, որը անարգանք էր, սրբապղծություն հարյուր հազարավոր զոհերի հիշատակի նկատմամբ: Չէ՞ որ Հայաստանում չկար տուն և գերդաստան, որը կորուստ չունենար...

Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման արժանացած 11.600 մարտիկներից 99-ը հայեր են: Ընդհանրապես՝ հերոսի կոչման է արժանացել 106 հայ ռազմիկ, որոնցից 4-ը՝ Մեծ



հայրենականին նախորդած խորհրդա-ֆիննական ռազմարշավի ժամանակ (կամպանիայում), 3-ը՝ հետպատերազմյան տարիներին գործած քաջագործությունների համար:

«Ժողովուրդների պատերազմին» մասնակցել է շուրջ 600.000 հայորդի, որի կեսը Խորհրդային Հայաստանից, ավելի քան 200.000-ը՝ Խորհրդային Միության մյուս հանրապետություններից, իսկ 100-հազարը՝ հայկական Սփյուռքից: Ռազմաճակատ մեկնեց Հայաստանի 1,3 մլն բնակչությունից ավելի քան 300 հազարը, այսինքն՝ յուրաքանչյուր երկրորդը կյանքը դրեց հայրենիքի զոհասեղանին: Աշխարհը ֆաշիզմից փրկելու գոյամարտում զոհվեց ավելի քան 200 հազար հայ մարտիկ:

Հերոսների թեմային ավելացնենք նաև, որ պատերազմի տարիներին 27 հայ զինվոր դարձավ Փառքի շքանշանի բոլոր 3 աստիճանների ասպետ, ինչը հավասարազոր է Խորհրդային Միության հերոսի կոչմանը:

1945 թ. վերջի տվյալներով՝ պատերազմին մասնակցեցին 68 հայ գեներալ, Խորհրդային Միության նավատորմի 1 ծովակալ (Հ. Իսակովը), օդուժի 1 Գլխավոր մարշալ (Ա. Խուդյակով-Խանփերյանցը): Նա հայերից առաջինն էր, ով պատերազմի շրջանում՝ 1944 թ. օգոստոսին, արժանացավ այդ բարձր կոչմանը:

Հետպատերազմյան ժամանակահատվածում պատերազմի մասնակից ևս 94 հայորդի արժանացել է գեներալի և ծովակալի (ադմիրալի) կոչման, այդ թվում՝ 1955 թ. Հ. Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության մարշալի, իսկ Հ. Իսակովին՝ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում: Ավելացնենք՝ ծովային հայ սպաներից 4-ին շնորհվել է փոխծովակալի, 5-ին՝ դերծովակալի կոչում: 1975 թ. Հ. Բաբաջանյանին շնորհվել է զրահատանկային զորքերի Գլխավոր մարշալի, 1980-ին Ս. Ագանովին՝ ինժեներական զորքերի մարշալի կոչում: Այսպիսով, ընդհանուր հաշվով՝ զորավարական բարձր կոչման է արժանացել պատերազմի մասնակից 162 հայ:

Պատերազմի տարիներին խոշոր զորամիավորումներ ղեկավարած ավելի քան 60 հայ գեներալներից Հ. Բաղրամյանը ռազմաճակատի հրամանատար էր, Ի. Իսակովը Խորհրդային Միության ռազմածովային նավատորմի նախարարի տեղակալն էր, ռազմածովային գլխավոր շտաբի պետը, Ս. Խուդյակովը՝ ռազմաօդային ուժերի պետը: Երեքը բանակի հրամանատարներ էին (այդ թվում՝ հրետանու գեներալ-գնդապետ Մ.

➤2

ՍԵՐԳԵՅ ՄԵՐԳԵԼՅԱՆԻ ՁԽԱՐՈՂ ԱՍՏՂԸ

Սույն թվականի մայիսի 21-ին՝ ՀՀ ԳԱԱ նախագահությունում տեղի ունեցավ հայ մեծանուն գիտնական, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Սերգեյ Մերգելյանի 90-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների և միջազգային գիտաժողովի բացումը:

«Այս միջոցառման հիմնական նպատակն է նշել Սերգեյ Մերգելյանի հսկայական ծառայությունները մաթեմատիկական գիտության զարգացման գործում, նրա փայլուն կազմակերպչական գործունեությունը՝ ուղղված գիտակազմակերպչական, գիտատեխնիկական կառույցների ստեղծմանը: Նա 1950-60-ական թվականներին մաթեմատիկական գիտության երկնակամարում փայլեց որպես աստղ, որը լուսավորեց շատ երիտասարդների ուղին գիտության ասպարեզում: Նա 21 տարեկանում արժանացավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճանի: Այդ տարիներին նա ուներ շատ բարձր գիտական հեղինակություն: Եվ այդ պատճառով նրան վստահվեց կազմակերպել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական հսկա կառույցը: Մեծ է Սերգեյ Մերգելյանի ավանդը նաև գիտությունների ազգային ակադեմիայի զարգացման գործում: Այսօր աշխարհի տարբեր գիտական կենտրոններում եթե հայտնի են Հայաստանի գիտության նվաճումները, առաջին հերթին դրանք կապված են Վիկտոր Համբարձումյանի և Սերգեյ Մերգելյանի անվան հետ»,- իր ողջույնի ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Ապա նա ընթերցեց ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի ուղերձը.

«Գիտությունների ազգային ակադեմիայի մեծարգո նախագահ,

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ,

Տիկնայք և պարոնայք,

Ուրախալի է, որ մեկ միջավայրում են հավաքվել տարբեր սերունդների ներկայացուցիչներ, ինչը վկայում է, որ անկախ ամեն ինչից, գիտությունը մեզանում ոչ թե տեղապտույտի, այլ զարգացման ընթացքի մեջ է:

Ավանդաբար գիտության ասպարեզ են մտնում այն մարդիկ, ովքեր գիտակցում են իրենց կոչումն ու առաքելությունը, ովքեր հավատում են, որ գիտության արժեքը երբեք չի նսեմանում, ովքեր նաև էնտուզիաստներ են: Սերգեյ Մերգելյանը, անշուշտ հենց այն անհատն ու գիտնականն էր, ով ոչ միայն գիտեր այդ արժեքը, այլև իր ողջ կյանքով ու գործունեությամբ զարգացրեց գիտությունը՝ բարձրացնելով ու բարձրության վրա պահելով հայ գիտական միտքը: Նա բացառիկ ավանդ ներդրեց ոչ միայն Հայաստանի գիտության, այլև տնտեսության մեջ:

Սերգեյ Մերգելյանի աստեղային ժամը սկսվեց շատ վաղ, երբ ընդամենը երկու տասնամյակը բոլորած երիտասարդ մաթեմատիկոսը միանգամից դարձավ գիտության դոկտոր՝ դրանով իսկ աշխարհին բեկումնային քայլերի նախապատրաստելով մաթեմատիկայի ոլորտում: Այսօրվա գիտաժողովի մասնակիցների լայն աշխարհագրությունը խոսուն վկայություն է, որ Մերգելյանի անունը լայնորեն հայտնի է համաշխարհային գիտական հասարակությանը: Իր գիտական բեղուն և հիմնարար գործունեությամբ Սերգեյ Մերգելյանն այսօր էլ մնում է հայկական մաթեմատիկական դպրոցի լավագույն այցեքարտը: Պատահական չէ, որ հենց նա դարձավ համամիութենական խոշոր գիտական կենտրոններից մեկի՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիր տնօրենը: Պատահական չէ, որ մինչև այսօր էլ մայրաքաղաքի այդ կառույցը կոչում ենք Մերգելյան ինստիտուտ:

Սերգեյ Մերգելյանն այն շտեմարանն էր, որ մշտապես լեցուն էր մտքի արգասիքով, որից այսօր էլ օգտվում են տարբեր սերունդների գիտնականները: Նրա օրինակն ամենավառ ապացույցն է, որ մեր ամենաարժեքավոր հարստությունն ու բնական պաշարը մարդկային միտքն է: Մանավանդ՝ գիտության զարգացումը կարևորագույն գործոն է պետության առաջընթացի համար: Ուրեմն, միասին, համատեղ ամեն ինչ պիտի անենք, որ այդ ասպարեզում երբեք ներկայության պակաս չլինի: Դա նաև մեր ամենամեծ ու մնայուն հարգանքի տուրքը կլինի մեծանուն գիտնական Սերգեյ Մերգելյանի թե՛ վաստակին, թե՛ նրա հիշատակին:

Մաղթում եմ բոլորիդ հաջողություններ, իսկ գիտաժողովին՝ արգասաբեր աշխատանք»:

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ուղերձն ընթերցեց Գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Վարդան Սահակյանը: Սերգեյ Մերգելյանի կյանքի և գործունեության մասին ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Գեղամ Գևորգյանը, Արման Քուչուկյանը, Նորայր Առաքելյանը, Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, Եվրոպական մաթեմատիկական միության փոխպրեզիդենտ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Արմեն Սերգեևը, պրոֆեսոր Միեր Տեր-Միքայելյանը, ԱՄՆ-ի Օհայո նահանգի Քենթի պետական համալսարանի պրոֆեսոր Վոլոդիմիր Անդրևսկին, ԱՄՆ-ի Հարավային Ֆլորիդայի համալսարանից Արթուր Դանիելյանը, Սան Անտոնիոյում Տեխասի համալսարանի էներգետիկայի ֆակուլտետի պատվավոր պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Սոս Աղայանը:

Սերգեյ Մերգելյանի կրտսեր որդին՝ Սերգեյ Մերգելյանը, շնորհակալություն հայտնեց հոր հիշտակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին, հյուրերին, կազմակերպիչներին միջոցառումների կազմակերպման և մասնակցության համար:

«Հատկապես նշանակալից է, որ այս միջոցառումն անցկացվում է Երևան քաղաքում, Հայաստանի հողում, որին իր եռանդը և ամբողջ էներգիան նվիրել է հայրս: Նրա երազանքն էր, որպեսզի Հայաստանը դառնա առաջատար գիտական կենտրոն, և ես ուրախ եմ, որ սա կատարվում է, որովհետև գիտաժողովն այդ քայլերից մեկն է, և անցած ուղին ևս հարուստ է իրադարձություններով: Ես հպարտ եմ նրանով, որ հայրս ձեռք է բերել արդյունքներ, և բազմաթիվ երիտասարդներ ցանկացել են հետևել նրա ուղուն: Հայրս միշտ ասում էր, որ աշխարհում ամենագեղեցիկ բանը մաթեմատիկան է: Դիմելով գիտաժողովի արտասամանյան մասնակիցներն՝ որպես այդ գեղեցկությանը ծառայողների, կմաղթեի, որպեսզի գնահատեիք նաև Հայաստանի գեղեցկությունը»,- իր խոսքում ասաց Սերգեյ Մերգելյանի որդին:

Սերգեյ Մերգելյանի 90-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովին մասնակցում է շուրջ 80 գիտնական Հայաստանից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Իրանից, Հնդկաստանից, Իսրայելից, Չեխիայից, Շվեդիայից, Վրաստանից, Խորվաթիայից, Սաուդյան Արաբիայից և այլ երկրներից: Գիտաժողովն իր աշխատանքները շարունակվեցին մինչև մայիսի 25-ը: Հոբելյանական միջոցառումների շրջանակներում ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի շքամուտքին փակցվեց Սերգեյ Մերգելյանի հուշատախտակը:

Հոբելյանական միջոցառումները կազմակերպել էին՝ ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Երևանի պետական համալսարանը, Հարավային Ֆլորիդայի համալսարանը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, Հայկական մաթեմատիկական միությունը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Վ. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտը՝ ՀՀ կառավարության, Հայկական բարեգործական ընդհանուր միության, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գործատուների միության աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

➢1 Բարսեղովը՝ 40-րդ գվարդիական փառապանծ բանակի), 8-ը կորպուս էին ղեկավարում, 28-ը՝ դիվիզիա, ավելի քան 100-ը բրիգադի ու գնդի հրամանատարներ էին:

Հայ ժողովրդի զավակները մարտնչել են բոլոր ռազմաճակատներում, բոլոր զորատեսակների շարքում, ակտիվորեն մասնակցել բոլոր վճռական ճակատամարտերին, աչքի ընկել զորավարական տաղանդով: Որպես ասվածի ապացույց՝ նշենք, որ, պաշտոնական տվյալների համաձայն՝ պատերազմի տարիների գեներալների թվով ռուսներից, ուկրաինացիներից ու բելոռուսներից հետո չորրորդ տեղն զբաղեցրել են հայերը: Ռազմաօդային և հրետանային ուժերի սպայական կազմում նրանք նույնպես չորրորդն էին: Իսկ մարտական շքանշաններով ու մարտական մեդալներով պարգևատրվածների, Խորհրդային Միության հերոսների և գեներալների թվով, 10 հազար բնակչի հաշվով, հայերը ռուսներից հետո երկրորդ տեղում են: Պատերազմի տարիներին Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի 42 ազգության ունկնդիրների շարքում ևս հայ սպաները թվով չորրորդն էին, իսկ հրետանային ուսումնարաններում սովորողների թվում՝ որորդը:

Առանձնակի հիշատակության է արժանի Կարմիր բանակի շարքերում կռվող հայկական զուտ ազգային վեց դիվիզիայի հերոսական պատմությունը (7 նման միավորում էլ համալրված էր զգալի թվով հայերով): Նրանք հերոսաբար կռվեցին պատերազմի ամենաարյունալի տեղամասերում: Բելոռուսական ռազմաճակատի կազմում ծանր մարտեր մղելով՝ Կովկասից Կուբան, Թաման, Կերչ, Ղրիմ, մինչև Լեհաստան ու Գերմանիա, ավելի քան 7500 կմ հերոսական մարտական ուղի անցավ 1941-ին Երևանում ձևավորված և 1942-ին ռազմաճակատ մեկնած 89-րդ հայկական Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ:

Այս ամենից հետո հայտարարել, որ Հայրենականը մեր պատերազմը չէր, պարզապես կեղծիք է, սուտ: Մեծ հայրենականը նաև մեր գոյամարտն էր: Դրա վառ վկայությունն էր «Հաղթանակի» բազմամարդ զբոսայգին, մանկասայլակներով հուշարձանի այցի եկած երիտասարդ հայրերն ու մայրերը և պատերազմած, հաղթանակած այն զինվորների դիմանկարները, որոնք ցուցադրում էին Անմահների գնդի մասնակից երիտասարդները՝ անմահ հերոսների թոռներն ու ծոռները:



ԱԼԲԵՐՏ ՂՈՒԼՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

2018 թ. մայիսի 2-ին լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալբերտ Գարեգինի Ղուլյանի 80-ամյակը:

Ալբերտ Գարեգինի Ղուլյանը ծնվել է Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղում, ուսուցիչների ընտանիքում:

1960 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում:

Աշխատանքային մկրտությունն Ա. Գ. Ղուլյանը ստացել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնում՝ աշխատանքի անցնելով որպես լաբորանտ: Նույն թվականին տեղափոխվում է ռադիոաստղագիտության բաժնի հենքի վրա ստեղծված ՀՍՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ՝ որտեղ և աշխատում է մինչ օրս:

Ա. Գ. Ղուլյանի գիտական հետազոտությունները կապված են անտենաների բնութագրերի ուսումնասիրության ճշգրիտ մեթոդների մշակման հետ՝ հիմնված հաճախությունների լայն տիրույթում տիեզերական աղբյուրների աղմկային ռադիոճառագայթման ընդունման սահմանային զգայնությամբ ընդունիչ սարքերի և համակարգերի նախագծման և իրականացման վրա: Այս բնագավառում կատարած հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքների հիման վրա Ա. Գ. Ղուլյանը 1975 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1990 թ.՝ դոկտորական թեզեր:

Որպես գիտնականի՝ Ա. Գ. Ղուլյանի կայացման գործընթացում նշանակալի է եղել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Է. Հ. Միրզաբեկյանի և Ռ. Մ. Մարտիրոսյանի, Ռուսաստանի ԳԱ ֆիզիկայի ինստիտուտի պրոֆեսոր Ա. Ե. Սալոմոնովիչի, ռադիոֆիզիկական գիտահետազոտական ինստիտուտի պրոֆեսոր, ակադեմիկոս Տրոիցկու, ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի պրոֆեսոր Բ. Գ. Կուտուզայի դերն ու գիտական ղեկավարությունը:

1978 թ.-ից մինչ այժմ Ա. Գ. Ղուլյանը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիան: Նրա ղեկավարությամբ լաբորատորիայում մշակվել են անտենաների բնութագրերի չափման մեծ ճշտություններ ապահովող նոր մեթոդներ, ստեղծվել՝ բարձր զգայնությամբ, աշխարհի խոշորագույն կենտրոնների լավագույն նմուշներին չզիջող, շահագործման հարմարավետությամբ ավելի նախընտրելի ընդունիչ համակարգեր: Կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիայի արգասաբեր գործունեության արդյունքը Ա. Գ. Ղուլյանի գիտական ղեկավարությամբ առաջատար գիտական ամսագրերում հրատարակված ավելի քան 250 աշխատանքները և 30 գյուտերի հեղինակային վկայագրերն են:

Նախկին Խորհրդային Միության կառավարական հատուկ որոշումների համաձայն ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, մասնավորապես կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիան, ԽՍՀՄ-ի խոշորագույն գիտական կենտրոնների, այդ թվում ԽՍՀՄ ԳԱ տիեզերական հետազոտությունների, ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի, Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտների, ինչպես նաև Բնական ռեսուրսների ուսումնասիրման պետական կենտրոնի, Տիեզերական սարքաշինության գիտատեխնիկական միավորման ճյուղային ինստիտուտների հետ համատեղ մասնակցել է «Վեգա», «Ֆոբոս», «Կոսմոս», «Պրիրոդա», «Օկեան» և այլ միջազգային գիտատեխնիկական ծրագրերին՝ իր ծանրակշիռ ներդրմամբ նպաստելով դրանց իրականացմանը:

Ա. Գ. Ղուլյանի ղեկավարությամբ կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիայում ստեղծված նոր, ռադիոաստղագիտական մեթոդների և զգայուն ընդունիչ սարքերի միջոցով մեծ ճշտությամբ չափվել են նախկին Խորհրդային Միության տիեզերական կապի նպատակով ստեղծված բոլոր անտենաների բնութագրերը:

Հիմնվելով իր ղեկավարած լաբորատորիայում ստացված գիտական արդյունքների վրա՝ Ա. Գ. Ղուլյանը արժանացել է երկու երկարաժամկետ դրամաշնորհի (Սորոս, ՄԳՏԿ), ինչը զգալիորեն նպաստել է դժվարին տնտեսական շրջանում լաբորատորիայի գիտական ներուժի և գիտական հետազոտությունների դրական դինամիկայի պահպանմանը:

Ա. Գ. Ղուլյանը որպես գիտնական հայտնի է ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նա ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր է գիտության և տեխնիկայի ասպարեզում, ինչպես նաև մի շարք գիտական խորհուրդների անդամ: Հաշվի առնելով ռադիոֆիզիկայի հիմնարար պրոբլեմներից մեկի՝ գերբարձր հաճախային տիրույթում ընդունիչ համակարգերի նոր կառուցվածքների նախագծման, ստեղծման, անտենաների բնութագրերի ուսումնասիրության ռադիոաստղագիտական նոր մեթոդների մշակման ասպարեզում Ա. Գ. Ղուլյանի մեծ ավանդը և նրա գիտակազմակերպական լայնածավալ գործունեությունը՝ 2000 թ.-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ. պարգևատրվել Անանիա Շիրակացու մեդալով, 2014 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Հանրապետության սահմանների պահպանության տեխնիկական վերազինմանը միտված Ա. Գ. Ղուլյանի ղեկավարած գիտական խմբի կատարած աշխատանքների շարքն արժանացել է 2011 թ. հանրապետության նախագահի մրցանակին:

Գիտական գործունեությանը զուգընթաց, Ա. Գ. Ղուլյանը զգալի ավանդ է ունեցել երիտասարդ կադրերի պատրաստման և հետազոտական աշխատանքներում նրանց ներգրավման գործում: 1975 թ.-ից նա անընդմեջ դասախոսել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ռադիոսարքավորումներ ամբիոնում, որի պրոֆեսոր է 1992 թ.-ից և մինչ օրս այդ մասնագիտացման պետական քննական հանձնաժողովի նախագահն է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 8 թեկնածուական և 2 դոկտորական թեզ:

Ա. Գ. Ղուլյանը սիրող ամուսին է, գորովագութ հայր և իր 4 թոռնիկներին անսահմանորեն նվիրված պապիկ, որոնցից երկուսը ապրում են իր հոգածության ներքո:

Շնորհավորելով ճանաչված գիտնականին՝ ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ստեղծագործական կյանք:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն

Հետախուզությունը պետության ու ժողովրդի պաշտպանության կարևոր միջոցներից է: Ուստի հետախույզը իր դերով ու նշանակությամբ հավասար է զինվորականին՝ այն տարբերությամբ, որ վերջինս գործում է բացահայտ, իսկ ինքը՝ ծածուկ. նրա գործն աներևույթ է՝ պատված գաղտնիության քողով, խրախուսանքներն ու պարգևներն էլ հաճախ տրվում են գաղտնիության պայմաններում: Այս ասպարեզում ևս կա հայկական հետք. այն կերտողներից է Գևորգ Վարդանյանը:



Առասպելացած հայերից մեկը

Ծնվել է 1924 թ. փետրվարի 17-ին Դոնի Ռոստովում: Հետախուզությունում է 1940 թ.-ից: Մեկ այլ մեծ հետախույզի՝ Իվան (Հովհաննես) Աղայանցի հանձարարությամբ Թեհրանում Երկրորդ համաշխարհայինի ժամանակ կազմավորում ու ղեկավարում է հատուկ խումբ, որն ստանում է «Թեթև հեծելազոր» անվանումը: Խումբը, որի անդամների մեծամասնությունը հայ երիտասարդներ էին, միայն առաջին 2 տարում հայտնաբերում է այս կամ այն կերպ գերմանական հետախուզության հետ կապված 400-ից ոչ պակաս մարդու: 1942 թ. խմբին անդամակցում է 16-ամյա Գոհարը, ով 1946-ին դառնում է Վարդանյանի կինը, զինակցուհին ու սխրակցուհին: 1943 թ. «Թեթև հեծելազորը» մասնակցում է Թեհրանի կոնֆերանսի հակահետախուզական ապահովմանը: Հիմնականում Գևորգ Վարդանյանի, նրա կնոջ և նշված հեծելազորի շնորհիվ հնարավոր է լինում կանխել «Մեծ եռյակի»՝ Ստալինի, Ռուզվելտի և Չերչիլի դեմ իրականացվելիք մահափարձը, որը, եթե հաջողությամբ պսակվեր, կխախտեր աշխարհի քաղաքական հավասարակշռությունը. Թեհրան 43-ից 60 տարի անց Ուինստոն Չերչիլի թոռնուհին՝ Սիլիա Սանդիսը, հատուկ գալիս է Մոսկվա և անձամբ հայ մեծ հետախույզին շնորհակալություն հայտնում՝ իր պապի անվտանգությունն ապահովելու համար: Թեհրանից հետո տասնամյակներ ի վեր Վարդանյան ամուսիններն աշխատում են արտերկրում: 1984 թ. հետախուզական գործունեության մեջ ներդրած մեծ ավանդի համար Գևորգ Վարդանյանն արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման. միակ խորհրդային հետախույզը, ով այս կոչումն ստացել է խաղաղ ժամանակ, կենդանության օրոք, ընդ որում՝ երկար տարիներ չլինելով կադրային չեկիստ: 1986-1992, 1993-2011 թթ. գնդապետ Վարդանյանն աշխատում է արտաքին հետախուզության կենտրոնական ապարատում, մասնակցում երիտասարդ աշխատակիցների ընտրության, ուսուցման և դաստիարակության աշխատանքներին:

Աշխարհն առաջին անգամ Վարդանյաններ առասպելի մասին իմացավ 2000 թ., երբ մամուլում տպագրվեց հետախույզների գործունեության թեհրանյան փուլը մանրամասն նկարագրող անդրանիկ հոդվածը. առաջին անգամ հիշատակվում են Վարդանյան ամուսինների իսկական անուն-ազգանունները:

Հետախուզության աստվածներից մեկը կյանքից հեռացավ 2012 թ. հունվարի 10-ին Մոսկվայում:

Առասպելական զույգի միակ սխրանքը, որ հայտնի է, մասնակցությունն է Ստալինի, Չերչիլի ու Ռուզվելտի դեմ մահափորձի կանխմանը: Ի դեպ, նրանց գործունեության նշված՝ «իրանյան» շրջանը գաղտնազերծված է մասամբ. այն, ըստ Գևորգ Վարդանյանի, կազմում է ընդհանուրի

սոսկ 5-10 տոկոսը: Հավելենք, որ հետախույզին հերոսի կոչում է շնորհվել ոչ այդ գործողության համար: Պատմում են, որ Վարդանյանները գործունեություն են ծավալել 100-ից ավելի երկրներում:

Գևորգ և Գոհար Վարդանյանները այս համակարգում են 16 տարեկանից, ինչը շատ հազվադեպ է լինում: Սովորաբար սկսում են աշխատել 30-ից՝ անցնելով հատուկ նախապատրաստություն: Նրանց բազմամյա ղեկավար գեներալ Դրոզդովը իր գրքում գրում է, որ ամուսիններն արագ են յուրացրել ծրագիրը, այն, ինչի վրա մյուսները տարիներ են վատնում, նրանք յուրացրել են 2 ամսում: Վարդանյանները, որ, ի տարբերություն հետախույզների մերօրյա սերնդի, ըստ էության, չեն անցել լիարժեք, ներկայումս տարիներ պահանջող հատուկ պատրաստվածություն, միայն Եվրոպայում աշխատելիս գաղտնազերծել են ՆԱՏՕ-ի տասնյակ գաղտնի հենակայաններ, բարեկամական կապեր հաստատել տարբեր երկրների բարձրագույն պաշտոնյաների, պետական այրերի, այդ թվում և գեներալների, նախարարների, վարչապետների, նախագահների հետ: Նրանք հավաքագրել են մի քանի տասնյակ մարդու. անհավատալի մեծ թիվ՝ մասնագետների վկայությամբ: «Անլեգալ» (ծպտյալ) հետախուզությունում Վարդանյան ամուսինների գումարային 118 տա- ➢4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿՈՒ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(1919 Թ. ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋ - ՄԱՅԻՍԻ ՍԿԻԶԲ)

Ռուս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Սերգեյ Գորոդեցկին (1884 – 1967) 1910-ական թվականների երկրորդ կեսին երկու անգամ եղել է Երևանում: 1916 թ. քաղաքից ստացած տպավորությունները նոթերի ձևով տպագրել է «Ռուսսկոյե սլովո» թերթում: Դրանցից երևում է, որ Երևանի պատկերը շատ քիչ էր տարբերվում այն նկարագրություններից, որ գտնում ենք Ա. Գրիբոյեդովի 1819, 1827 թթ. նոթերում ու նամակներում, Ի. Շոպենի «Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи» գրքի էջերում: «Եթե քաղաքի հիմնադիր, Վանի թագավոր Արգիշտին հիմա անցներ Երևանով, -գրում է Ս. Գորոդեցկին, -նրա սիրտը տեղից դուրս կթռչեր: Աղբահոր է և ոչ թե քաղաք: Երևանցիները պարծենում են իրենց ցեխով, այն հասարակ չէ, այլ հոտավետ. անցնելն անհնար է. կես արշին կթաղվես»: Ռուսաստանի հովանու տակ մտնելուց հետո անցել էր շուրջ իննսուն տարի, քաղաքում հիմնավոր բարենորոգում չէր եղել, և Պետերբուրգում հասակ առած Գորոդեցկու վրա Երևանն ու երևանցիները թողնում են նման ճնշող տպավորություն:

Երկրորդ անգամ ռուս բանաստեղծը Երևան է գալիս քաղաքի «Գրական – գեղարվեստական ընկերության» հրավերով՝ Հայաստանի Առաջին Հանրապետության տարելիցին՝ 1919 թ. ապրիլի վերջին - մայիսի սկզբին: Հանրապետության խորհրդարանի դահլիճում նա երկու դասախոսություն է կարդում՝ «Վանի ստվերները» և «Ժամանակակից հայ քնարերգությունը» վերնագրերով: Ինչպես վկայում է ժամանակի մամուլը, «Հասարակությունը շատ գոհ էր Գորոդեցկու դասախոսություններից: Դասախոսին հաճախ ընդհատում էին բուռն ծափահարություններով»:

Իր ուղևորությունը՝ Թիֆլիսից սկսած, Գորոդեցկին ժամանակին մանրամասն արձանագրել և «Ճանապարհորդություն դեպի Երևան» ընդհանուր խորագրով տպագրել է «Կավկազսկոյե սլովո» թերթում, որտեղ կարդում ենք. «24-ի լուսաբացին (ուղևորության երրորդ օրը) մենք դուրս եկանք Ալեքսանդրապոլից և առավոտվա տասնմեկին տեսանք Երևանը՝ իր գորշագույն եկեղեցիով, այգիներով և հանդիսավոր Արարատով: Ամբողջովին մարգարտափայլ ալեզարդը ժանյակավոր ամպերի միջից մեզ դիմավորեց սիրալիր: Նրա կեցվածքում հանգստություն էր երևում, բայց դարավոր ճակատը ակոսված էր խորունկ խոհերի կնճիռներով: Մենք համարձակություն չունեցանք անհերես հարցումներով խռովելու նրա աստվածային նիրվանան և միայն երազում էինք, թե որքան հետաքրքիր կարող էր լինել հիմա և՛ մեզ, և՛ Եվրոպայի համար հարցազրույցը Մասիսի հետ»:

Երևանում գտնվելու օրերին Գորոդեցկին եղել է քաղաքի ու շրջակայքի հիշարժան վայրերում, էջմիածնում, հանդիպել է քաղաքում համախմբված մշակութային ու հասարակական գործիչների հետ, կիսել նրանց հոգսերը, ցավերն ու դառնությունները: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա «Ճանապարհորդություն դեպի Երևան» շարքի ակնարկները: Դրան- ➢5

...հայերից մեկը

➢3 րին անցել է առանց գեթ մեկ ծախողման:

Գևորգ Վարդանյանի գործընկերներից ոմանք նրա մասին գրել են. «Զորգեին, Աբելին, Կիմ Ֆիլբիին հավասար: Իսկ, գուցեև, առաջինը...»:

Վարդանյան ամուսիններին շնորհվել են նաև տարբեր պատվավոր կոչումներ:

Վարդանյան ամուսինները նաև մեծ հայրենասերներ էին. «Ապրելով Պարսկաստանում՝ բոլորս պատրաստ էինք սնվել միայն ցամաք սև հացով, միայն թե ապրեինք Մայր Հայրենիքում՝ մեր սիրելի Հայաստանում»,-ասում են նրանք: «Հիշելով այն ծանր տարիները,-ասում է Մարտական կարմիր դրոշի և Հայրենական պատերազմի շքանշանակիր Գոհար Վարդանյանը,-իսկական երջանկության զգացում ես ապրում այն գիտակցումից, որ պետքական և օգտակար ես եղել Հայրենիքին, իսկ ժամանակը, վերափոխելով հիշողությունները, ջնջում է անցած տարիների դժվարությունները: Ես ինձ շատ երջանիկ եմ համարում, որ ամուսնուս հետ միասին ամբողջ կյանքս աշխատեցի հետախուզությունում: Բոլորս ենք պարտք Հայրենիքին: Մենք բոլորս ոչինչ ենք առանց նրա: Պետք է հեռու լինել նրանից, որպեսզի հասկանալ, թե ի՞նչ է այն քեզ համար նշանակում»:

Վարդանյան ամուսինները հաճախ էին լինում իրենց հայրենիքում, որին և իրենց ժողովրդին կապված էին հոգու թելերով: Գևորգ Վարդանյանը միշտ ուզում էր, որ իր ժողովուրդը լավ ապրի, մարդկանց Երևանի փողոցներում ժպտերես տեսնի: Շատ էր ուրախանում Հայաստանի նվաճումներով: Չնայած պատկառելի տարիքին՝ ոտքով շատ էր զբոսնում Երևանով մեկ, ժամերով նայում շենքերին, շինարարությանը, անկեղծ հետաքրքրությամբ հարցուփորձ անում մարդկանց. ուրախանում ամեն մի՝ անգամ աննշան լավ բանով, որ տեղի էր ունենում իր պատմական հայրենիքում:

Հակահետախուզության վետերան, անկախ Հայաստանի ազգային անվտանգության ծառայության հակահետախուզության գլխավոր վարչության առաջին պետ, պաշտոնաթող գնդապետ Գեորգի Ավետիկյանը հիշում է, որ երբ վերջապես ավարտվեց դեռ խորհրդային տարիներին սկսված Սևան-Դիլիջան թունելի շինարարությունը, իրենք Գևորգ Վարդանյանի հետ գնացին՝ հատուկ այն տեսնելու: Նույնը Դավիթաշենի կամրջի դեպքում:

Վարդանյան ամուսինները Հայաստանում բազմաթիվ հանդիպումներ են ունեցել մի շարք բուհերի ու դպրոցների սովորողների հետ: 2011 թ. հոկտեմբերի 5-ին Անանիա Շիրակացու անվան ճեմարանում Գևորգ Վարդանյանը որպես «պատվավոր ճեմարանցի» մասնակցել է Ուսուցչի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառմանը. մի հատված նրա ելույթից. «...Խորին շնորհակալությունս եմ հայտնում ուսուցիչներին, որոնց առջև ես միշտ՝ իմ մանուկ հասակից մինչև հիմա, խոնարհվել եմ, որովհետև կյանքում ինչ հաջողության որ հասել եմ, այդ բոլորը հնարավոր է դարձել, առաջին հերթին, այն գիտելիքների շնորհիվ, որոնց հիմքը դրել են ուսուցիչները:

Կրկին անգամ շնորհակալությո՛ւն, և շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին, որոնց գործն ամենապատվավորն է»:

Նա և տիկին Գոհարը միշտ պատրաստ էին կիսելու իրենց հարուստ փորձը՝ հանուն հայրենիքի բարգավաճման: Արցախյան ազատագրական պատերազմի դժնդակ տարիներին հետախուզության առասպելներից մեկը մայր հայրենիքի հետ էր. տալիս էր արժեքավոր խորհուրդներ, աջակցում ու նպաստում նորանկախ երկրի արտաքին հետախուզության ծառայության կայացմանն ու զորացմանը: Գևորգ Վարդանյանի սաներից մեկի վկայությամբ՝ երբ Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին/ամիսներին Գետաշենում, Շահումյանում, Արցախ աշխարհի մյուս բնակավայրերում տեղի էին ունենում այնպիսի ողբերգական դեպքեր, ինչպիսին էր, օրինակ, տխրահռչակ «Օղակ» («Кольцо») գործողությունը, Գևորգ Վարդանյանը ջանք չէր խնայում դրանք ինչ-որ ձևով կանխելու կամ, գոնե, դրանց ողբերգական հետևանքները մեղմելու համար:

«Մեզ՝ բոլոր հայերիս, պետք է համախմբվել՝ հաջողության հասնելու համար: Չէ՞ որ, ինչպես ասում են, աշխարհում ընդամենը մի բուռ հայ ենք, այն էլ աշխարհասփյուռ: Եվ պետք է վերջ տալ ինչ-ինչ «բաժանարար» գծեր անցկացնելուն՝ երևանցի, ղարաբաղցի, լիբանանցի, ռուսաստանցի և այլ հայերի միջև: Մենք բոլորս պարզապես ՀԱՅ ենք: Նրանց բոլորին (սփյուռքահայ հայրենակիցներին) կարող է և պետք է միավորի իրենց նախնիների Հայրենիքը՝ Մայր Հայաստանը»,-ասում էր մեծ հայը:

Ի պատասխան լրագրող Գուրգեն Խաժակյանի այն հարցին, թե ինչո՞վ է նա բացատրում այն պայծառ հետքը, որ մեր հայրենակիցները թողել են հետախուզության պատմության մեջ, Գևորգ Վարդանյանն ասում է. «Նախ և առաջ դա ես բացատրում եմ նրանով, որ հայերն իրենց խառնվածքով շատ նվիրված մարդիկ են: Եթե նրանք նվիրված են ինչ-որ մի բանի կամ ինչ-որ մի մարդու, ապա երբեք ծանր կացության մեջ չեն դնի: Ուստի հայերին միշտ վստահել են, որովհետև նրանք միշտ ազնվորեն և մաքուր են ծառայել ԽՍՀՄ-ին, Ռուսաստանին: Եվ հետո՝ բոլորին էլ աշխարհումս հայտնի է, որ մեր ազգը խելքի և լեզվական ընդունակությունների պակաս բնավ չունի»:

Մի առիթով Գևորգ Վարդանյանը իրեն նվիրված գրքի հեղինակ Նիկոլայ Դոլգոպոլովին ասել է. «Մենք՝ ես ու Գոհարը, հայ ենք: Եվ հպարտանում ենք մեր տաղանդավոր ժողովրդով: Ընդսմին, բարի ու հյուրասեր»:

Հետախուզության պատմության մեջ առասպելացած զույգի մասին Հայաստանում ու արտերկրում գրվել են գրքեր (Գուրգեն Խաժակյան, «ՀՊՈՒՄԸ ԼԵԳԵՆԴԻՆ. ծպտյալ հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյաններ» (ռուսերեն, Երևան, 2010 թ.), նույնի, «Հերոս անլեգալ (ծպտյալ) հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյաններ. «ՀՊՈՒՄԸ ԼԵԳԵՆԴԻՆ» շարունակվում է...», Երևան, 2011, նույնի, «Հերոս ծպտյալ հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյաններ. ԱՆՄԱՀ ԼԵԳԵՆԴ», Երևան, 2014, Նիկոլայ Դոլգոպոլով, «Վարդանյան», Երևան, 2015, որոնցից էլ մեծապես օգտվել ենք այս ակնարկը գրելիս), բազմաթիվ հոդվածներ, նկարահանվել վավերագրական ֆիլմեր ու հաղորդումներ:

Հայրենիքը, իհարկե, չի մոռանում իր մեծ զավակներին. 2014 թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը սահմանեց «Գևորգ Վարդանյան» գերատեսչական մեդալ՝ լավագույն հետախույզներին պարգևատրելու համար: Առաջին մեդալը հանդիսավոր պայմաններում շնորհվեց հետախույզի այրուն՝ Գոհար Վարդանյանին:

Նույն թվականի մայիսի 14-ին Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի պատին փակցվեց Գևորգ Վարդանյանին նվիրված հուշատախտակ:

2015 թ. սեպտեմբերի 8-ին Երևանի քաղաքապետարանի ավագանու միաձայն որոշմամբ Երևանի համար 192 հիմնական դպրոցը (տնօրեն՝ Ալվարդ Թադևոսյան) կոչվեց հայազգի առասպելական հետախույզ, ԽՍՀՄ հերոս, Հայաստանի Հանրապետության պատվո շքանշանի ասպետ Գևորգ Վարդանյանի անվամբ: 2015 թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ անվանակոչության հանդիսավոր արարողությունը:

Դպրոցն ունի Գևորգ Վարդանյանի անվան թանգարան, որը հիմնադրվել է հենց անվանակոչության օրը, իսկ 2015 թ. դեկտեմբերին բացվել է Գևորգ և Գոհար Վարդանյանների անվան ռազմահայրենասիրական դասարան: Թանգարանում կան Վարդանյան ամուսինների անձնական լուսանկարներից, Գևորգ Վարդանյանի անձնական օգտագործման կենցաղային իրերից, լրագրեր, գրքեր (հեղինակներ՝ Գուրգեն Խաժակյան, Նիկոլայ Դոլգոպոլով): Կրթօջախում նշվում են Գևորգ Վարդանյանի ծննդյան և մահվան օրերը: Ցուցադրվում են ֆիլմեր՝ նվիրված ոչ միայն մեծ հայորդուն, այլ նաև մեր մյուս ազգային երևելի գործիչներին: Բնականաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված առասպելական հետախույզ ամուսիններին

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ

Հանրապետության առաջին քայլերը

Այո՛, արցունքի ու տառապանքի ծովից ծնվեց Հայաստանի անկախությունը: Ոմանք չէին հավատում նրան. անկախություն ու հանրապետություն բառերը դնում էին չակերտի մեջ: Եվ այդպես վարվելու հիմքերը շատ էին զորավոր. իրոք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախությունը այդ պայմաններում թվում էր հեգնանք:

Փաստորեն, հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12.000 քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, աշխարհի խուլ անկյունում, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված ատամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, ավար ու ավեր, լաց ու թշվառություն, կոտորածի սարսափ: Իսկ մյուս կողմ՝ էնվերի բանակը հաղթական՝ համաթրքական երազներով տոգորված, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դեպի Ապշերոն ու Թուրքեստան:

Այսպես էր դրությունը Հայաստանում, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ: Մայիսի 26-ից հետո հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայր աստիճանի, վրացիները՝ արբեցած իրենց անկախությամբ ու գերմանական հովանավորությամբ՝ թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, դավաճան, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող, հայ ժողովրդի գոյության թշնամի...

Անկախության առաջին իսկ օրերից վրաց կառավարությունն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրույթ արտահայտել, որ «գերիշխան Վրաստանի» հողի վրա շարունակում է մնալ օտար պետության մի իշխանություն: Հայերին ուղղվում էին աներկդիմի խոսքեր, թե նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը: Եվ այդ այն պահին, երբ ամեն հաղորդակցություն Երևանի հետ կտրված էր և Լոռու ու Փամբակի ձորերում թուրքերն ու տեղական մահմեդականները մաքրագործում էին հայկական գյուղերը:

Ծանր էր կացությունը: Եվ հենց որ հաշտարար պատվիրակությունը Բաթումից վերադարձավ, Հ. Ազգային խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարության կազմակերպումը՝ հրավիրելով վարչապետության Հ. Քաջազնունիին. այստեղ էլ բացվեց անակնկալ դժվարություն. ժողովրդական կուսակցությունը, Մ. Պապաջանյանի գլխավորությամբ, կտրականապես մերժեց Քաջազնունիի առաջարկը՝ մտնելու նախարարության մեջ: Ժողովրդականները բաց արին կատաղի պայքար Հ. Հ. Դաշնակցության դեմ՝ պահանջելով, որ սա քաշվի ասպարեզից, և իշխանությունը հանձնվի իրենց:

Քաջազնունիի բոլոր ջանքերը՝ միջկուսակցական կառավարություն ստեղծելու՝ ի դերև ելան. ժողովրդականները համառ կերպով մնացին իրենց տեսակետի վրա: Նրանց հաստատակամությանը նպաստում էր և այն հանգամանքը, որ Ազգ. խորհուրդը չյուրացրեց Երևանի և Թիֆլիսի համար ջոկ-ջոկ կառավարություններ կազմելու ծրագիրը, ժողովրդականները չէին ուզում հեռանալ Թիֆլիսից:

Ի վերջո, երկար բանակցություններից հետո Քաջազնունիին հաջողվեց կյանքի կոչել հետևյալ կազմով կառավարություն. ինքը, Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործերի՝ Արամ, ելևմտաց՝ Խ. Կարճիկյան, զինվորական՝ Յ. Հախվերդյան:

Վերջինը միայն անկուսակցական էր, մյուսները անդամ էին Հ. Հ. Դաշնակցության:

Կառավարությունը կարգավորեց մի շարք ընթացիկ խնդիրներ: Վրաստանի կառավարության մոտ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Ա. Ջամալյանին. հուլիսի 2-ին վրաց կառավարության հետ կնքեց համաձայնություն 200 միլիոն անդրկովկասյան նոր բոներ բաց թողնելու մասին, որից 120 միլիոն պիտի տրվեր Հայաստանին, իսկ ութսունը՝ վրացիներին, դրեց հայկական կորպուսի գույքերը՝ Երևան փոխադրելու, ինչպես

➤6

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿՈՒ ԵՐԵՎԱՆՅԱՆ...

➤4 ցում կենդանի գույներով գծագրվում է քաղաքում տիրող հասարակական - քաղաքական կացությունը՝ «կուսակցական եռուն պայքարով», առօրյա մթնոլորտով:

«Վերակենդանացող քաղաքը» ակնարկում բանաստեղծը նկարագրում է հայ ժողովրդի դրությունը 1919 թ. գարնանը, կառավարության գործունեությունը երկրում եղած դժվարությունները հաղթահարելու, գաղթականության պրոբլեմը լուծելու ուղղությամբ: «Ռուսական ծայրամասի նահանգական քաղաքը վերածվել է պետության մայրաքաղաքի՝ դեպի երկու ծով ելքով: Հետամնաց գավառական կյանքը փոխվել էր շինարարության տենդով: Չէ որ եթե այնտեղ՝ Փարիզում, ձևում են Հայաստանի քարտեզը, ապա այստեղ՝ Երևանում, կատարվում են նրա ինքնուրույն կյանքի առաջին քայլերը: Այնտեղ՝ մտահղացումներ, այստեղ՝ իրագործում, այնտեղ՝ գաղափարներ, այստեղ՝ իրականություն»:

Ռուս բանաստեղծը տալիս է հայկական անկախ պետության մայրաքաղաքի խիստ լավատեսական պատկերը. «Երևանը վերակենդանանում է: Արտաքինից այն քիչ է փոխվել. նույն փողոցներն ու խանութներն են, նույն թրև եկող ամբոխը, բայց շարժման մեջ ռիթմն է ուրիշ, ավելի գործնական, շատ նոր դեմքեր, Երևանում նախկինում չտեսնված մարդկանց նոր տիպ: Ամենուր ընթանում է ամենօրյա, մեղվաջան, համառ աշխատանք: Պետական շինարարության բուտաֆորիա ամենևին տեսանելի չէ: Ոչ մի ցուցադրանք, ոչ մի «պարտականություն», ամեն ինչ համեստ է ու խելամիտ: Նաև բոլորի հոգում հենց նոր ապրած ծանր սև օրն է: Եվ այն ընդմիշտ վերացնելու համար Հայաստանի մայրաքաղաքը լարում է ողջ ուժերը»:

Գորոդեցկին գոհունակությամբ նշում է այն իրողությունը, որ անկախություն ձեռք բերած Հայաստանը չի «խզել» ռուսաստանյան անցյալի հետ իր կապերը. «Եվ հարկավոր է նշել հայերի խնամքոտ վերաբերմունքն իրենց տարածքում Ռուսաստանի թողած ժառանգության հանդեպ: Ռուսական մշակույթի հետ կապը նրանք չեն խզել և ազգային վերածնունդը հակադրության մեջ չի դրվել ռուսական ավանդույթներին»:

Հրապարակախոսը նշում է հայ հասարակայնության կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, կյանքի նոր փուլում հաղթահարվող դժվարությունները. «Հայաստանի Հանրապետությունն ստեղծվում է նրա բնակչության բացառիկ վիճակում գտնվելու պայմաններում: Նրա բնակչությունը, ինչպես հայտնի է, գտնվում է փախստականի վիճակում: Այն ճնշող մեծամասնությամբ կտրված է իր բնակության վայրից և մշտական աշխատանքից: Եվ կարելի է ասել, որ փախստականների հարցը կլանում է ողջ կառավարության ուշադրությունը առանց գերատեսչությունների ու նախարարությունների խտրության: Տեղավորել, կերակրել, բնակչությանը տնտեսական կյանքին վերադարձնել, ապաստարանների հազարավոր որբերին կերակրել ու կրթել, կրճատել մահացությունը և հիվանդացությունը՝ այդ ամենի համար հսկայական ուժեր, միջոցներ ու էներգիա է հարկավոր: ... Ինչ էլ չլինի, Երևանում հիմա հուսահատական տրամադրություն չկա, ընդհակառակը, դրությունը բարելավող որոշ հեռանկարներ են ի հայտ եկել: Կառավարական աշխատանքին զուգահեռ զարգանում է հասարակական ու քաղաքական կյանքը»:

Եթե առաջներում երևանցիները ապրում էին իրենց ներփակ տներում ու այգիներում, ապա այժմ՝ բնակչության քաղաքական եռուզեռով ու հետաքրքրությամբ կյանքը դարձել է անճանաչելի: «Երևանցին հաստատապես անհանգստացած է և փոխում է իր սովորությունները: Առաջ նա ապրում էր իր այգիներում, հարմարավետ հնաոճ տներում ... Այժմ այդ ... կենցաղը ներխուժել են նոր ձայներ: Կյանքը դարձել է անհանգիստ և դժվար, բայց և հարուստ, հետաքրքիր, բովանդակալից: Քաղաքական հարցերը զբաղեցնում են բոլորին, նորությունները տարածվում են ինչպես ռադիոյով: Այս առումով Երևանն անճանաչելի է», – գրում է Ս. Գորոդեցկին:

Երևանցիների համար նախընտրելի հայկական անապակ գինու՝ « 35», անվանումով ու վերնագրով ակնարկը հիմնականում քաղաքում Ս. Գորոդեցկու անցկացրած հրաշալի և ուրախ օրերի մասին է: «Խնջույքների շաբաթը» Հայաստանում՝ ահա այս ակնարկի էությունը՝ հայկական հյուրընկալության մասին: Բայց ոչ միայն դա: Իբրև առաջիններից մեկը, Ս. Գորոդեցկին այստեղ արձանագրում է նաև ժամանակի չարաղետ այն երևույթը, որի հեղինակներն անվանվում էին մաուզերիստներ, տալիս է նրանց գունեղ պատկերը: Ժողովրդի ճակատագրի ճգնաժամային իրավիճակում, երբ սովն ու համաճարակներն ամեն օր խլում էին անհամար զոհեր, երբ ամեն պահ խառնակությունների ու հարձակումների վտանգի տակ էր հայրենիքը, Երևանի փողոցներում անպատիժ քայլում էին ավազակաբարո երիտասարդներ՝ կրակելով լուսամուտներին ու ցուցափեղկերին, մարդկանց վրա: Ահ ու սարսափի մեջ էր բնակչությունը, և Գորոդեցկին՝ անկեղծ բարեկամի դառնությամբ, զգուշացնում էր դրա ծանր հետևանքները, նաև հույս հայտնելով, որ պետությունը ճիշտ կօգտագործի երիտասարդության եռանդը: «Մաուզերիստները տեղական տեսարժանությունից են, ինչով փառաբանվում է Երևանը, այնպես ինչպես, իշխանով, ջրով, № 35-ով ... Երևանյան մաուզերիզմը ծայրահեղ երևույթ է, որի մեջ կարելի է տեսնել մեր ոչ վաղ անցյալի վերապրուկը, երբ պատերազմը, դրանից հետո անարխիան ցնցում էր հասարակությունը, խեղաթյուրելով պատանեկան ուժի ուղղությունը: ... Պետք է հուսալ, որ այժմ, երբ Հայաստանը մեծ կարիք ունի աշխատակիցների, հայ երիտասարդության մկանային ուժն ու քաջությունը առավել ճիշտ կօգտագործվի»:

Այս ակնարկում, Ս. Գորոդեցկին պահը չի կորցնում անդրադառնալու Արևմտյան Հայաստանի մասին տխուր հիշողություններին: Այսպես, նկարագրելով երկրի ղեկավարության, մասնավորապես Հայաստանի խորհրդարանի նախագահ Ավետիս Սահակյանի հետ (ով ռուս բանաստեղծի Վանի ընկերներից էր) կայացած հանդիպումներից մեկը, գրում է. «Լիքը, քաղցր գինին պարզ էր, ինչպես երեկոյան երկինքը Վանում, և մենք ջերմ ու տխուր շատ բան ունեինք հիշելու: Սեղանը սպասարկում էր տխուր աչքերով ու դեմքի վրա ժպիտը մոռացած Մամախաթունից մի աղջիկ: Նրա պատմությունը երեխաների ողբերգության շատ դեպքերից մեկն է: Ինձ փոխանցեցին նրա պատմությունն իր կրած սարսափների մասին: Մանրամասները ցնցող են: Կոտորածի և բռնության ոռպեին մայրը կանչում է ողջ ընտանիքին, որպեսզի հրաժեշտ տա: Եվ հետո երեխաների հետ նետվում է գետը: Բոլոր դիակները գետը չէր կարող տանել, և մի երեխա փրկվում է: Դա պատմող աղջիկը վերցրել է երեխային ու հետը տարել: Նրա համար դժվար էր: Նրան ծեծել են, երբ փորձել է նրա համար ջուր գտնել ... Ինչ է կատարվել այդ դեռահասների հոգում, և քանիսն են այդպիսիք, ինչպիսին պատմող աղջիկն էր, և ով կփոխհատուցի այդ բոլոր չարչարանքները: Ով կվերադարձնի ժպիտը հավիտյան վախեցած այդ դեմքի վրա, ով նորից կսովորեցնի ծիծաղեցնել ոչ մանկական տխուր շրթունքները»:

Սրա կողքին Գորոդեցկին հիացած գրում է սասունցիների քաջության ու բարքերի մասին. «Սասունցիների մահը լեգենդ է: Լեռնային հպարտ ցեղ: Գերի ընկնելով՝ սնունդ չեն ընդունում և մահանում են ինքնահյուծումից: ...Պաշտպանելով իրենց կյանքը, նրանք՝ կանայք և հսկաները, բարձրանում են ժայռերի վրա: Նրանց առջև խորխորատ էր: Թշնամին նեղում էր: Եվ երբ թշնամին մոտեցավ, նրանք կռվի ու մահվան երգ երգելով, շուրջպարով, ազատ ու անվախ, նետվեցին անդունդը: Թուրքերը ցնցված էին այդպիսի հերոսությունից»:

... Հայաստանի ժամանակի քաղաքական կացության առումով այս ակնարկում բնութագրական են խնջույքներին վերաբերող հատվածները: Ս. Գորոդեցկու հետ Երևան էին եկել նաև արտիստներ, և ինչպես գրում է ինքը՝ «... դասախոսությունների ու համերգների շաբաթը միաժամանակ դարձել է խնջույքների շաբաթ»: Այդ խնջույքները հետապնդում էին քաղաքական ու դիվանագիտական նպատակներ, որոնց նա տալիս է բազմանշանակ բացատրություն. «Իսկ բանկետները այժմ երևանյան կյանքում խաղում են նշանակալի դեր: Եվրոպացիների մշտական հերթափոխը, Պուանդեբարի, Տեմբերլեի, Վուդի և էլի ուրիշների ժամանումը, կարսյան տոնակատարությունները, – մեր բոհեմական եռյակի համեստ գալուստը՝ զուգադիպեց այս բոլոր իրադարձություններին»: Նկարագրելով վերջին խնջույքը անգլիացիների ու ֆրանսիացիների մասնակցությամբ՝ անսքող դառնությամբ Գորոդեցկին ավելացնում է. «Բայց զվարճության պահին ես հանկարծ իմ ներսում սարսափ զգացի: Մոտեցա լուսամուտին: Մութ գիշեր է: Երևանյան սենյակում Եվրոպան է: Սովորական հյուրասրահ, հնօրյա դաշնամուր և եվրոպացիներ: Երազ չէ՞ սա: Երկա՞ր է տևելու այս»: Այստեղ խոսքը որոշակիորեն վերաբերում է եվրոպական երկրների գաղութատիրական քաղաքականությանը, որոնք հայ ժողովրդի թափած արյան վրա շարունակում էին իրենց դիվանագիտական առևտուրը ...

Ահա այսպիսին են Հայաստանի Առաջին Հանրապետության տարելիցի նախօրեին Ս. Գորոդեցկու Երևանից ստացած տպավորությունները:

Անուշավան ՉԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար

Հանրապետության...

➢5 նաև անդրկովկասյան ընդհանուր գույքերի բաժանման խնդիրը, կապեր հաստատեց գերման, ավստրիական և թուրքական ներկայացուցիչների հետ. նշանակեց Պոլսի խորհրդաժողովի անդամներ և այլն:

Բաթումի խորհրդաժողովից հետո Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Քրեսը հայտնեց, որ հունիսի 25-ին Պոլսում պետք է գումարվի մի խորհրդաժողով՝ մասնակցությամբ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի և կովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների՝ լուծելու համար Կովկասի և Թուրքիայի միջև առկախ մնացած բոլոր խնդիրները: Հայ. Ազգային խորհրդի կողմից այդ խորհրդաժողովին պատվիրակներ նշանակվեցին՝ Ա. Ահարոնյանը, Ա. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը: Այս վերջինը, որ մերժում էր դաշնակցականների հետ մտնել կառավարության մեջ, դաշնակցականների հետ գնաց Պոլիս, իսկ ապագային, ինչպես կտեսնենք, նաև Փարիզ: Հունիսի 14-ին պատվիրակությունը մեկնեց Թիֆլիսից:

Այս բոլոր աշխատանքները ուշացնում էին կառավարության մեկնումը, որ ջղայնություն էր առաջ բերում ոչ միայն վրացիների, այլև հայ հասարակության մեջ: Երևանից պահանջում էին փութացնել մեկնումը: Այդ նպատակով նույնիսկ պատվիրակներ եկան Թիֆլիս: Թիֆլիսի մամուլն ու հանրային կարծիքը դատապարտում էին Հ. Ազգ. խորհրդի ցույց տված դանդաղաշարժությունը, մեղադրում էին, որ Ազգ. խորհրդի անդամները չէին ուզում բաժանվել Թիֆլիսից, ինչ որ շատ էլ հեռու չէր ճշմարտությունից:

Շատերի համար Երևան գնալը առանձնապես անհանդուրժելի խնդիր էր, որ անձնական նկատումները քողարկվում էին սկզբունքային առարկություններով:

Ի վերջո, Երևան փոխադրվելու հարցը կտրուկ կերպով դրվեց Ազգ. խորհրդի և կառավարության հուլիսի 13-ի միացյալ նիստում, ուր կուսակցության ներկայացուցիչներն արին իրենց հայտարարությունները: Հ. Հ. Դաշնակցությունը պահանջում էր, որ Խորհուրդն ու կառավարությունը ամբողջ կազմով անմիջապես մեկնեն Երևան: «Մեր տունը վերադառնանք,- ասում էին նրանք»: Հայ ժողովրդական կուսակցությունը առաջարկում էր Երևան ուղարկել մի պատվիրակություն և կարգել տեղական կառավարություն կամ Ազգ. Խորհուրդը որպես համազգային մարմին և իշխանության աղբյուր, պահել Թիֆլիսում: Հայ բուրժուազիայի համար Թիֆլիսն էլ, ինչպես ամբողջ աշխարհը, «մեր տունն» էր: Սոցիալիստ-հեղափոխականները առաջարկում էին, որ Ազգ. խորհուրդն ու կառավարությունը գնան Երևան, կազմեն այնտեղ Հայաստանի տեղական իշխանություն, ապա Ազգ. խորհուրդը վերադառնա Թիֆլիս ու մնա իբրև ընդհանուր ազգային իշխանություն: Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երևան փոխադրվելուն, այժմ հետ առան իրենց առաջարկը և տատանում էին անվճռականության մեջ:

Այս բոլոր կարծիքները լսելուց հետո, Քաջազունին հայտարարեց, որ եթե Ազգ. խորհուրդը մնա Թիֆլիսում կամ կազմվեն երկու Ազգային խորհուրդներ, ինքը կհրաժարվի վարչապետությունից: Որի վրա, 7 քվեով ընդդեմ 5-ի, որոշվեց Ազգ. խորհուրդն ու կառավարությունը փոխադրել Երևան: Հայը շատ ամուր էր նստել Թիֆլիսում ու դժվարությամբ էր պոկ գալիս... Երկար ձգձգումներից ու վարանումներից հետո հուլիսի 17-ին Ազգ. խորհուրդն ու կառավարությանը վերջապես մեկնեցին Երևան:

Ալեքսանդրապոլով անցնելը վտանգավոր էր. Սանահինից սկսած երկաթուղին գտնվում էր թուրքերի ձեռքը: Պետք էր անցնել Աղստաֆա-Դիլիջանով:

Մեկնումը կատարվեց շատ տխուր պայմաններում: Վրացիները, որոնք առհասարակ, երևելի վարպետներ են հանդիսավոր ընդունելություններ ու «բարի երթ»-եր կազմակերպելու, այս անգամ, կարծես դիտմամբ, արել էին ամեն բան, որպեսզի վիրավորեն հայերի ինքնասիրությունը: Հակառակ նախօրոք հայերի կողմից տրված դիմումի, վրաց կառավարությունը ոչ մի քայլ չէր արել դյուրացնելու համար «քույր հանրապետության» կառավարության ճանապարհորդությունը: Վրաց կառավարության կողմից ոչ մի ներկայացուցիչ չէր եկել կայարան: Երկաթուղային վարչությունը, իր հերթին, անփափկանկատ բծախնդրություններով դժվարություններ էր հարուցում, տրամադրել էր մի հին կեղտոտ ու անհարմար վագոն, կարծես գաղթականներ լինեին ճամփորդողները: Մեծ դժվարությամբ կարելի էր եղել արտոնություն ստանալ՝ մի երկու կիսախարխուլ ինքնաշարժ տանելու: Նվաստացած, դառն զգացումներով մեկնեցին Թիֆլիսից Հայաստանի վարիչները: Կարծես թշնամի երկրից էին հեռանում: Փոյլի կայարանում վրաց սահմանապահները լրացրին պակասը՝ փորձելով նույնիսկ խուզարկել Հայաստանի կառավարության վագոնը, և միայն գերման սպայի միջամտությունը ազատեց այդ խայտառակությունից:

Ընդհակառակը, ինչքան տարբեր էր վերաբերումը Ադրբեջանում: Սահմանի վրա հայկական կառավարությունը ընդունվեց զինվորական պատիվներով. ընդառաջ էին եկել նահանգապետը և Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչները: Աղստաֆայում և Ղազախում արվեց պաշտոնական ընդունելություն, ճաշ էր պատրաստված ի պատիվ հյուրերի:

Հայաստանում, ամեն տեղ Ազգ. խորհուրդն ու կառավարությունը ընդունվեցին անվերապահ համակրանքով:

Առաջին հանդիսավոր ընդունելությունը Հայաստանի հողի վրա տեղի ունեցավ Դիլիջանում:

Սեմյոնովկայում աղ ու հացով ընդառաջ եկան ռուս ազգաբնակչության ներկայացուցիչները ու գնդապետ Սամարցյանը իր գնդով:

Ելենովկայում խռնված էր ահագին բազմություն՝ մերկ ու թշվառ գաղթականների: Ռուս բնակիչները հեռացել էին Հյուսիսային Կովկաս, և նրանց տները բռնել էին Կարսի, Շիրակի, Ղարաքիլիսայի հայ փախստականները:

Հուլիսի 9-ին, երեկոյան դեմ հասան Ախտա: Երևանից եկել էին դիմավորելու Արամի և տեղական կառավարության անդամները:

Հայկական կորպուսի սպայակույտը զոր. Նազարբեգյանի գլխավորությամբ հյուրերին ընդունեց Քանաքեռում, ուր պատրաստած էր թեյասեղան, որի միջոցին արտասանվեցին հանդիսավոր ճառեր:

Ուշ երեկոյան հասան Երևան: Քաղաքը զարդարված էր դրոշներով, գորգերով ու կանաչով: Աստաֆյան փողոցը լցված էր բազմությամբ:

Փողոցի երկու կողմը շարքերով կանգնած էին զորքերը՝ Սարդարապատի ու Բաշ Ապարանի հերոսները: Հրամանատարի զեկուցումից հետո հնչեց երաժշտությունը, խանդավառ «կեցցե»-ն հազարավոր բերաններից:

Երեկոյան տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին Թիֆլիսի և Երևանի Ազգ. խորհուրդների և կառավարության անդամները, ռուս, ուկրաինացի ու մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչները, պարսկական հյուպատոսը, գերմանական ու թուրք սպաները: Արտասանվեցին բոլորի կողմից ողջույնի ճառեր, որոնց պատասխանեց Հ. Քաջազունին. «Մեր պետությունը,- ասաց նա,- ի միջի այլոց, կոչվում է ոչ թե հայկական, այլ Հայաստանի Հանրապետություն: Այդ ցույց է տալիս, որ մեր պետությունը հայրենիք է, նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդների համար»:

Հաջորդ օրը սկսեցին պետական աշխատանքները: Կառավարությունը հայրենի հողի վրա անցավ գործի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ»

2018 թ. ապրիլի 25-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ալ-Ահրամ ռազմավարական և քաղաքական հետազոտությունների կենտրոնի (Կահիրե) համատեղ գիտաժողովը «Հայ-արաբական փոխառնչություններ. Հայոց ցեղասպանությունից մինչև արդի մարտահրավերներ» խորագրով: Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ-ում հավատարմագրված արաբական դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, ուսանողներ, երիտասարդ հետազոտողներ, լրագրողներ, Սփյուռքի ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Նա մասնավորապես նշեց. «Միջազգային այս գիտաժողովը շատ կարևոր խնդիր է իրագործում՝ մեկ անգամ ևս լուրջ քննարկման ենթարկել հայ և արաբ ժողովուրդների բարեկամական կապերը, որոնք սկիզբ են առել դեռ հնագույն ժամանակներից: Հայ-արաբական համագործակցությունն ունի նաև կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն: Այս գիտաժողովը շատ կարևոր քայլ կլինի նաև Հայաստանի և Եգիպտոսի հարաբերությունները գիտական և այլ ոլորտներում էլ ավելի խորացնելու ուղղությամբ»:

Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի դեսպան Թարեք Մաաթին կարևորեց Հայաստանում արևելագիտության ինստիտուտի գոյությունը հայերի և արաբների միջև հարաբերությունների ամրապնդման հարցում: «Արաբների և հայերի պատմական հարաբերությունները փոխադարձ շահի վրա են հիմնված: Ուզում եմ նշել, որ տասնյակ տարիներում կարողացանք համագործակցության կամուրջներ կառուցել: Մասնավորապես Եգիպտոսում մենք մեծապես կարևորում ենք Հայաստանի հետ հարաբերությունները: Հայկական համայնքը ևս Եգիպտոսում շատ մեծ դեր է ունեցել և ունի: Ունենք հայ քաղաքագետներ, արվեստագետներ, տնտեսագետներ, գործարարներ և այլն»,- նշեց նա:

Եգիպտոսի Հայ դատի հանձնախմբի նախագահ Արմեն Մազլումյանը հայ-արաբական հարաբերությունները զարգացնելու և միմյանց ճանաչելու հարցում կարևորեց մեդիա դաշտի նշանակությունը: Նա նշեց, որ վերջին տարիներին Եգիպտոսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ գրքեր են տպագրվել, գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր են նկարահանվել: Հայաստան են այցելել բազմաթիվ եգիպտացի լրագրողներ, հասարակական-քաղաքական և մշակութային գործիչներ, պաշտոնատարներ, ինչը կարևոր է երկկողմ համագործացության համար: Ա. Մազլումյանը հայ-եգիպտական հարաբերությունների զարգացման հարցում կարևորեց եգիպտահայ համայնքի դերը: Ի դեպ, նշված գիտաժողովի կայացմանը նույնպես օժանդակել էին Եգիպտոսի հայ համայնքը և Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը:

Եգիպտական կողմից գիտաժողովին մասնակցում էին ալ-Ահրամ կենտրոնի քաղաքական հետազոտությունների բաժնի փորձագետ, նաև ալ-Ահրամի «Ժողովրդավարություն» ամսագրի խմբագիր Ատեֆ Սաադավին, ինչպես նաև ալ-Ահրամի թուրքական հետազոտությունների ծրագրի փորձագետ, նույնանուն ամսագրի գիտական քարտուղար Քարամ Սայիդը: Նրանց զեկուցումները վերաբերում էին Եգիպտոսում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին, Եգիպտոսի հայ համայնքին, համայնքի մասին եգիպտական հասարակության ու պետության մոտեցումներին, Հայաստան-Եգիպտոս հարաբերությունների զարգացմանն ու հեռանկարին: Եգիպտացի հետազոտողները նշեցին, որ Եգիպտոսում ոչ պաշտոնապես Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչվել է: Նշվեց, որ վերջին շրջանում Եգիպտոսի խորհրդարանում Հայոց ցեղասպանության մասին լսումներ են անցկացվել, նախագահ Աբդել Ֆաթահ Ալ-Սիսին նույնպես անդրադարձել է Հայոց ցեղասպանության թեմային, դատապարտել հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության քաղաքականությունը: Ընդհանրապես, Օսմանյան կայսրության շրջանում իրականացված Հայոց ցեղասպանության դատապարտումը Եգիպտոսում ժողովրդական դիվանագիտության օրակարգում է և կարող է աջակցել օրենսդրական նախաձեռնություններին: Բացի այդ, ինչպես նշվեց, Եգիպտոսում մեծ թվով մինչև 5000-ի հասնող արխիվային նյութեր ու փաստաթղթեր կան, որոնք հաստատում են Հայոց ցեղասպանության վավերականությունը և կարող են օգտակար լինել Հայոց ցեղասպանության ուսումնասիրության և միջազգային ճանաչման հարցում:

Արևելագիտության ինստիտուտի կողմից ելույթ ունեցան արաբագետ, պ. գ. թ., դոցենտ Արաքս Փաշայանը (զեկուցման թեմա՝ «Հայաստանի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը»), թուրքագետ, պ.գ.թ. Անուշ Հովհաննիսյանը (զեկուցման թեմա՝ «Աֆրինի գրավումը Թուրքիայի արտաքին և ներքաղաքական ընդգրկումներում»), արաբագետ, պ.գ.թ. Արամ Գասպարյանը (զեկուցման թեմա՝ «Երիտթուրքերի ազգայնական քաղաքականությունը արաբական վիլայեթներում առաջին աշխարհամարտի սկզբին»), արաբագետ Արարատ Կոստանյանը (զեկուցման թեմա՝ «Սիրիայի հայ համայնքը. արդի մարտահրավերներ»), արաբագետ, պ.գ.թ. Ն. Մարգարյանը՝ ՀՑԹԻ-ից (զեկուցման թեմա՝ «Հայ գաղթականների վրանաքաղաքները Պորտ Սաիդում Հայոց ցեղասպանության տարիներին») և արաբագետ Ն. Երանոսյանը՝ ՊԻ-ից (զեկուցման թեմա՝ «Հայկական հարցը եգիպտական ալ-Ահրամ թերթում (19-դարի վերջ-20-րդ դարի սկիզբ»):

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և Ֆրանսիայի Բուրգունդիա Ֆրանշ-Կոմտեի համալսարանի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր

Հուշագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ԲՖԿՀ-ի պրեզիդենտ, պրոֆեսոր Նիկոլա Շայեն:

Նախատեսվում է ընդլայնել ու խորացնել համագործակցությունը քվանտային օպտիկայի, ատոմային ֆիզիկայի, ֆոտանիկայի, օպտոէլեկտրոնիկայի, նանոկառուցվածքավորված նյութերի, զուգահեռ և բարձր արտադրողականության հաշվարկային համակարգերի, ավտոմատացման և այլ ուղղություններով:

«Ֆրանսիայի հետ մեր գիտական կապերը շատ հին են: Հիմնական համագործակցությունը սկիզբ է առել անկախության տարիներից: Ֆրանսիական գիտակրթական կառույցների հետ մենք համագործակցում ենք ֆիզիկայի, ինֆորմատիկայի, հնագիտության, երկրաբանության ոլորտներում: Մենք համագործակցություն ունեցել ենք նաև գիտական կադրերի պատրաստման առումով»,- իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

ԲՖԿՀ-ի պրեզիդենտ, պրոֆեսոր Նիկոլա Շայեն ներկաներին ծանոթացրեց ԲՖԿՀ-ի գործունեությանը, գիտահետազոտական ուղղություններին, այն հնարավորություններին, որոնք կօժանդակեն հետագա համագործակցության խորացման և նոր ուղղություններով համատեղ կիրառական հետազոտությունների անցկացման համար:

Համատեղ աշխատանքների հնարավորությունները ներկայացրեցին ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի Գիտական հաշվարկների կենտրոնի ղեկավար Հրաչ Ասցատրյանը:

ԲՖԿՀ-ն ստեղծվել է Բուրգունդիայի և Ֆրանշ-Կոմտեի ռեգիոնների 7 համալսարանների ու գիտակրթական կենտրոնների միավորումով: Այսօր այն Ֆրանսիայի խոշորագույն համալսարաններից է՝ շուրջ 60 000 ուսանողով, 54 գիտական լաբորատորիայով և 9 000 աշխատակցով: ՀՀ ԳԱԱ-ն ԲՖԿՀ-ի հետ համագործակցում է շուրջ 10 տարի:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՔԵՐԸ ՀԵՏԱԶՈՏՈՂ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻՆ

Վաստակաշատ պատմաբան, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի, Վազգենյան և Գևորգյան ճեմարանների, Բեյրութի Համազգային բարձրագույն դասընթացների անփոխարինելի բարձրակարգ դասախոս, հազարավոր սաներ կրթած և ազգային հոգևոր-բարոյական բարձր չափանիշներով դաստիարակած երանելի ուսուցչապետ Պետրոս Հովհաննիսյանը (1944-2016 թթ.) բարձր և մնայուն անուն է նաև գիտության անդաստանում: Նրա գիտական ժառանգության ընտրանին լույս է տեսել վերջերս, «Հայագիտակ» հրատարակչության կողմից՝ «Պատմագիտական ուսումնասիրություններ» վերնագրով:

Գրքի առաջաբանում («Գիտության և կրթության մեծ նվիրյալը») ճանաչված գրահրատարակիչ Ա. Իսոյանը բացառիկ նրբագծերով է ներկայացնում Պ. Հովհաննիսյանի գրքասիրությունն ու գրքապաշտությունը, իրավացիորեն նշելով, որ գիտնականն իր տունը վերածել էր գրքի անառիկ ամրոցի:

Գրախոսվող սույն ժողովածուն աներկբա վկայում է, որ Պ. Հովհաննիսյանի գիտական նախասիրությունների և հետաքրքրությունների շրջանակը բավական լայն է, տարողունակ և բազմաբովանդակալից:

Նախ սկզբից ևեթ ընդգծենք, որ Պ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում Մեծն Մովսես Խորենացին է՝ հայ դասական պատմագրության հիմնադիրը, չափանիշն ու ուղենիշը:

Առհասարակ, հայ պատմիչների կյանքի, գործի և գործունեության վերաբերյալ նրա վերաբերմունքը հասնում է գրեթե սրբազան երկյուղածության: Նա հրաշալի պատկերացնում, գնահատում և իմաստավորում է միջնադարի հայ պատմիչների թողած գրական ժառանգության արժեքը հայության մտավոր և հոգևոր մշակույթի վերելքի և առաջադիմության գործում: Ահա թե ինչու Պ. Հովհաննիսյան հայ գիտնականը իր կյանքի մի զգալի մասը նվիրել է հայ պատմիչների և պատմագիտական մտքի խորքային ուսումնասիրությանը: Նրա գրչի ներքո նորովի են բացահայտվել միջնադարյան Հայաստանի և Կիլիկիայի պատմագիտական մտքի երևելի դեմքերը՝ Կորյուն Վարդապետը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշե վարդապետը, Ղազար Փարպեցին, Սեբեոսը, Հովհան Մամիկոնյանը, Ղևոնդ վարդապետը, Հովհաննես Դրասխանակերտցին, Անանուն պատմիչը, Թովմա Արծրունին, Արիստակես վարդապետ Լաստիվերտցին, Դավիթ Ալավկաորդին:

Իհարկե, սույն պատմիչների շարքում նա առանձնակի ուշադրություն է հատկացրել պատմահայր Մովսես Խորենացուն, որի ցայտուն վկայությունն են նաև սույն ժողովածուի մեջ զետեղված գործերը (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար առաջին թարգմանությունը, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ֆրանսերեն թարգմանությունները, Հենրիկոս Բրենները և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» լատիներեն համառոտագրված առաջին թարգմանությունը, Մովսես Խորենացին օտար թարգմանություններով): Միանգամայն տեղին և իրավացի է նրա խորքային այն դիտարկումը, ըստ որի հայ հին հեղինակներից և ոչ մեկի երկասիրությունն այնքան խոր ազդեցություն չի թողել հայ պատմագիտական ու հասարակագիտական մտքի վրա, որքան Խորենացու «Հայոց պատմությունը», որով կրթվել ու դաստիարակվել են բազում սերունդներ:

Հայ պատմիչներին նվիրված նրա գործերը աչքի են ընկնում սկզբնաղբյուրային վավերագրերի խոր իմացությամբ, պատճառահետևանքային կապերի խոր ընկալումով, պատմահամեմատական մեթոդների ու բնութագրերի հստակ կիրառումով:

Պետրոս Հովհաննիսյանը իր գիտական հետաքրքրությունների «թիրախ» ընտրեց ոչ միայն միջնադարյան շրջանի հայ պատմիչներին, այլև նրա գիտական պրպտումների հոլովույթում հայտնվեցին նոր և նորագույն շրջանի հայ պատմաբանները (Ղևոնդ Ալիշան, Աստվածատուր Խաչատրյան (Խաչ), Ավետիս Պերպերյան, Հակոբ Մանանդյան, Հովհաննես Հակոբյան (Վարդ Շահենի), Գառնիկ Գյոզալյան, Ռուբեն Աբրահամյան, Գրիգոր Միքայելյան, Հայկազ Ժամկոչյան, Աշոտ Աբրահամյան, Հրանտ Արմեն, Հակոբ Զորյան, Աշոտ Հովհաննիսյան): Սույն պատմաբանների կյանքի և գործի ուսումնասիրությանն է նվիրված ժողովածուի երրորդ բաժինը: Փաստառատ դիտարկումներով ու անաչառ կեցվածքով նա կերտել է մեզանում հայտնի և քիչ հայտնի այս պատմաբանների գիտական անեղծ դիմանկարը:

Չորրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է 20-րդ դարի հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին: Վերջինիս բնութագրում է որպես վիթխարի անհատականության և հայ բյուզանդագիտության հիմնադիրի: Մի շարք հոդվածներ («Տիգրան Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադոնցի աշխատություններում», «Մովսես Խորենացի և Նիկողայոս Ադոնց», «Մարզպան Վասակ Սյունեցու գործունեության վերագնահատման Նիկողայոս Ադոնցի տեսությունը», «Նիկողայոս Ադոնցի «Հայոց քննական պատմության» ճակատագիրը», «Նիկողայոս Ադոնցի կրոնագիտական ժառանգությունը», «Նիկողայոս Ադոնցի նամականին», «Նիկողայոս Ադոնցի կենսապատումների արդիականությունը» և այլն) հիմնավոր խորությամբ ներկայացնում են նշանավոր հայագետի ստեղծագործական ճանապարհի կարևորագույն փուլերն ու հանգրվանները: Մեզանում ոչ ոք այդպես չի խորացել Ադոնցի ստեղծագործական, գիտական ժառանգության գաղտնիքների մեջ, ինչպես դա կարողացել է անել Պ. Հովհաննիսյանը: Ժողովածուի հինգերորդ բաժինը ներկայացնում են Հայ Առաքելական եկեղեցուն և նրա վաստակառու գործիչներին նվիրված ուսումնասիրությունները (Փիլիպոս Ա. Աղբակեցի, Վահրամ եպիսկոպոս Մանկունի, Կարապետ Տեր-Մկրտչյան, Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Գևորգ Կոստանդնուպոլսեցի, Սուքիաս արք. Պարզյանց, Տ. Սահակ վրդ. Ամատունի, Վահան Ծ վրդ. Բաստամյանց, Ամենայն հայոց կաթողիկոս Տ. Տ. Մակար Ա Թեղուտցի Տեր-Պետրոսյան, Տ. Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյան):

Հատընտիրի վեցերորդ բաժնում «Մատենագիտություն» խորագրի ներքո ներկայացված են գիտնականի մատենագիտական գործերը՝ նվիրված Մ.Խորենացուն, հայկական հարցին և հայոց ցեղասպանության պատմությանը: Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ, պետք է հատուկ դրվատանքով ու արժևորումով արձանագրենք, որ Պետրոս Հովհաննիսյան գիտնականի և ուսուցչապետի լավագույն գործերը վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման ուսումնասիրմանը, կարևորմանն ու իմաստավորմանը: Հայ պատմագիտության էջերում բազմիցս գրվել է հայ ազատագրական շարժման մասին, և այդ ծավալուն գրականության մեջ Պ. Հովհաննիսյանը կարողացել է ասել իր թարմ խոսքն ու հաստատել իր ասելիքը: Անհագ հետաքրքրությամբ է կարդացվում «Հայ ազատագրական շարժումները XV դար-XVII դարի վերջ» ստվարածավալ ուսումնասիրությունը, որում նա նորովի հայացք է նետում հայ ազատագրական շարժման նախաքայլերին և նախադրյալներին, համոզիչ հիմնավորումներով ներկայացնում հայ ազատագրական շարժման շուրջ դարերով ձևավորված լեգենդը:

Այս ամենին որպես ամփոփում հավելենք, որ ընթերցողի գրասեղանին դրված տաղանդաշատ, բազմաշնորհ պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի տասնամյակներ շարունակ կատարած պրպտուն ուսումնասիրությունների ընտրանին աչքի է ընկնում գիտական բարձր մակարդակով, պատմական երևույթները վերլուծելու, պարզաբանելու և իմաստավորելու տեսական, լայնընդգրկուն պատրաստվածությամբ:

Ժողովածուում ընդգրկված նյութերը, հոդվածները, ակնարկներն ու ուսումնասիրությունները պերճախոս կերպով վկայում են նրա հեղինակի՝ բազմադարյան հայոց պատմության տարբեր փուլերի, պատմաշրջանների և բազմապիսի երևույթների խորքային ու բացառիկ իմացության մասին:

Սույն հատընտիրը, իրոք, մի յուրահատուկ հուշարձան է կյանքին, ցավոք, արդեն հրաժեշտ տված հայրենասեր ու հայրենանվեր մարդու, տքնաջան գիտնականի և անկրկնելի ուսուցչի հիշատակին:

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Սույն հրապարակումը փորձ է ներկայացնելու Հայաստանի էներգետիկայի վիճակը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին:

Հայաստանում 1913 թվականին գոյություն ունեին 13 էլեկտրակայաններ, նրանցից չորսը աշխատում էին դիզելով, իսկ ինը՝ ջրի ուժով: 1913 թվականին Հայաստանում արտադրվել է 5,1 միլիոն ԿՎտժ էլեկտրական էներգիա:

Սյունիքի հիդրոէլեկտրակայանը 1919 թ. չէր գործում: Տուրբինը նորոգման կարիք ուներ, սարքավորումների մի մասը բացակայում էր: Գեներատորը հիմնովին կործանված էր: Ջրանցքը խցանված էր և ծածկված բուսականությամբ: Բնական է, որ կայանը այսպիսի պայմաններում չէր կարող աշխատել:

Ջրախորի հիդրոէլեկտրակայանը կառուցվել էր ֆրանսիական ընկերությունների կողմից 1909 թվականին: Կայանում տեղադրվել էր արագության ավտոմատ կարգավորումով «Պելտոն» տեսակի մեկ հիդրոտուրբին, որն ուներ 600 ԿՎտ հզորություն, իսկ եռաֆազ հոսանքի գեներատորը՝ 6000 Վ լարման: Ջրի առումը իրականացվել էր Ողջի գետից հասարակ ամբարտակի միջոցով: Մինչև հիդրոտուրբին հասնելը ջուրը խիստ թեք լեռնային հատված ունեցող ջրանցքով անցել է 2500 մետր:

Կայանի օգտակար ճնշումը կազմում էր 120 մետր: Կայանում արտադրված էլեկտրական էներգիան 10 կմ երկարության բարձր լարման օդային գծերով տրվում էր Ղափանի հանքերին և գործարաններին, որտեղ ցածրացնող ենթակայաններում ձևափոխվում էր ցածր լարման:

Ողջի գետի ջրի ծախսի խիստ տատանումների հետևանքով էլեկտրական էներգիայի տարեկան առավելագույն արտադրությունը հասնում էր մինչև 2 միլիոն ԿՎտ.ժամ:

Ջրախորի հիդրոէլեկտրակայանը 1919 թ. քանդված էր: Բաշխիչ սարքը բացակայում էր: Տուրբինը չուներ պատյան և կարգավորիչի որոշ մասեր: Վնասված էին գեներատորի ստատորի փաթույթները և խարսխի փաթույթները: Ջրանցքը ամբողջ երկարությամբ լցված էր հողով: Բացակայում էին շենքի դռները, լուսամուտները, հատակը: 10 կիլոմետր երկարությամբ էլեկտրահաղորդման գիծն ամբողջությամբ բացակայում էր:

Կապանի հիդրոէլեկտրակայանի տուրբինի աշխատանքային անիվները լրիվ փոխման կարիք ունեին: Բացակայում էր գեներատորի բաշխիչ սարքը: Ջրանցքը լցված էր հողով, ջրառը գոյություն չուներ: 1920-ական թվականներին կայանի աշխատանքը վերականգնվել է:

Կապանի դիզելային էլեկտրակայանի դիզելները պահպանվում էին, սակայն բացակայում էր բաշխիչ սարքավորումը:

Շատ վատ վիճակում էր գտնվում նաև Ալավերդու հիդրոէլեկտրակայանը: Այստեղ տեղադրված երեք հիդրոագրեգատներից մեկը գտնվում էր նորոգման մեջ, երկրորդը՝ լավագույն դեպքում կարող էր զարգացնել մոտ 200 ԿՎտ հզորություն: Բոլոր տուրբինների կարգավորիչները խիստ մաշված էին, որի հետևանքով տուրբինները հաճախ կանգնում էին: Երեք տուրբինները միաժամանակ աշխատել չէին կարող: Ջրառի վնասման հետևանքով նաև տուրբինների հզորությունները փոքր էին և այն բավարարում էր բնակիչներին էլեկտրական էներգիայով մատակարարելու համար: Հետագայում պատվարի ամրացման հետևանքով սկսեցին աշխատել երկու տուրբին, որոնց գումարային հզորությունը կազմում էր մոտ 500 ԿՎտ:

Ալավերդիում գոյություն ունեցող երկու դիզել գեներատորները նավթի բացակայության պատճառով չեն աշխատել: Այդ պայմաններում պղնձահանքային գործարանը չի աշխատել:



Էլեկտրական լամպ փայտե սյուների վրա, Երևան, Արամի փողոց, 1920 թվական

1920 թվականին Հայաստանում գոյություն ունեին 9 էլեկտրակայան, որոնք հիմնականում սպասարկում էին քաղաքային բնակչությանը: Դրանք արդյունաբերությանը էլեկտրական էներգիա էին մատակարարում աննշան չափով: Գոյություն ունեցող էլեկտրակայաններում էներգետիկ սարքավորումները ֆիզիկապես մաշված էին:

Երևանի «Ամպեր» ընկերության հիդրոէլեկտրակայանը կառուցվել և շահագործման է հանձնվել 1907 թվականին: Կայանում սկզբնական շրջանում տեղադրվել է երկու «Ֆրենսիս» տեսակի հորիզոնա-

➤8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ...

➢7 կան հիդրոտուրբին, որոնցից առաջինն ուներ 150 կՎտ հզորություն, 230 Վ լարում, 600 պտ/րոպ պտուտաթվերով, «Վոլտա» գործարանի եռաֆազ հոսանքի գեներատոր, իսկ մյուսը՝ 25 կՎտ հզորությամբ, 230 Վ լարման հաստատուն հոսանքի երկու գեներատոր:

Մի քանի տարի հետո մեքենայական սրահից դուրս տեղադրվել է ևս մեկ հիդրոտուրբին, որն ուներ մեկ աշխատանքային անիվ: Այն ժապավենային փոխանցումով միացվել է հիմնական տուրբինի գեներատորի հետ: Այս հիդրոտուրբինը փաստորեն համարվել է, այսպես ասած, պաշարային և օգտագործվել է միայն վթարային դեպքում, քանի որ հնարավոր չի եղել նրա աշխատանքի համար ապահովել անհրաժեշտ ջրի քանակ:

Կայանի ջրի մատակարարման համար օգտագործվել է գոյություն ունեցող բաց ջրանցքը, որը կառուցվել է ջրաղացի համար: Ջրի կորուստները փոքրացնելու նպատակով 1500 մետր երկարությամբ ջրանցքը վերանորոգվել է: Զանգու (Հրազդան) գետից ջրի առումը իրականացվել է հասարակ ամբարտակի (պատնեշի) միջոցով:

Կայանի օգտակար էջքը կազմում էր 13 մետր: Այն նախատեսվել է Երևան քաղաքին էլեկտրական էներգիայով մատակարարելու համար: Արտադրված էլեկտրական էներգիան տրվում էր քաղաքին հիմնականում փողոցային լուսավորության համար, ինչպես նաև կայանի մոտ գտնվող սպառողներին:

Կայանի արդյունաբերական բեռնվածությունը կազմում էր հինգ էլեկտրաշարժիչ, յուրաքանչյուրը 7.5 կՎտ հզորությամբ, որոնք նախատեսված էին սեզոնային աշխատող բամբակ մշակող հաստոցների, 5 կՎտ հզորությամբ մեկ էլեկտրաշարժիչ մեխանիկական վերանորոգման արտադրամասի և 4 էլեկտրաշարժիչ 8 կՎտ գումարային հզորությամբ պահածոների գործարանների և մի շարք այլ փոքր արհեստանոցների համար:



«Ամպեր» ընկերության հիդրոէլեկտրակայանի ընդհանուր տեսքը

Արդյունաբերական սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարումը իրականացվում էր երեկոյան պիկային ժամերից հետո:

Տարեկան արտադրված 375 հազար կՎտ.ժամ էլեկտրական էներգիայի մոտ 20 տոկոսը օգտագործվում էր արդյունաբերության, մնացածը՝ կոմունալ-կենցաղային նպատակների համար: Երևան քաղաքի փողոցների ամբողջ լուսավորությունը սահմանափակված էր 24 լապտերներով և 50 Վատտանոց 150 լամպերով:

1926 թվականին ԵրՀԷԿ-ի շահագործումից հետո «Ամպեր» ընկերության հիդրոէլեկտրակայանը ենթարկվել է ապամոնտաժման:

Էլեկտրակայաններում աշխատելու համար մարդկանց ընտրում էին նկատի առնելով նրանց ծանոթ լինելը փականագործության և հարակից մասնագիտությունների հետ: Հայաստանում չկային ոչ բարձրագույն, ոչ էլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, նույնիսկ ուսումնարաններ, որպեսզի կադրեր պատրաստեին էլեկտրակայաններում աշխատելու համար: Էլեկտրակայանների մեծ մասում հերթափոխի ընթացքում աշխատում էր մեկ մարդ: Նա կատարում էր և՛ հերթափոխի մեքենավարի, և՛ էլեկտրիկի պարտականությունները: Այդ տարիներին շահագործման անվտանգության տեխնիկայի վերաբերյալ գիտելիքները դեռևս գտնվում էին շատ ցածր մակարդակի վրա: Դրա պատճառով էլ հաճախ տեղի էին ունենում վթարներ, ինչի հետևանքով հոսանքահարվում էին աշխատողները, և շարքից դուրս էին գալիս էներգետիկական սարքավորումները:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պղնձի արդյունահանումը Հայաստանում նվազեց, որն էլ իր հերթին բերեց էլեկտրական էներգիայի արտադրության կրճատմանը: Հայաստանում 1919 թվականին արտադրվել է մինչև 2 միլիոն կՎտ.ժամ, իսկ 1920 թվականին՝ մինչև մեկ միլիոն կՎտ.ժամ էլեկտրական էներգիա: 1920 թվականին Հայաստանի էլեկտրակայաններում աշխատող մարդկանց թիվը չի գերազանցել 65-ը: Այդ թվականին յուրաքանչյուր բնակչին ընկնում էր ընդամենը 3.2 կՎտ.ժամ էլեկտրական էներգիա:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ՄԱՐԴԸ ԱՌԱՋԱՑԵԼ Է... ԿԱՊԻԿԻՑ

Ձեր ուշադրությանը ներկայացվող ծաղրանկարները, որ արվել և հրապարակվել են ուղիղ 100 տարի առաջ, դեռ չափազանց մեղմ արտահայտությունն են այն համընդհանուր վրդովմունքի, զայրույթի և շփոթության, որ առաջացրին Դարվինի «Տեսակների ծագումը» գիրքն ու նրա էվոլյուցիոն տեսությունը:

Դարվինը հրավիրում է կապիկին թռչել օդակի միջով:

Դարվինը հույս ուներ, որ իր էվոլյուցիոն տեսության բնական ընտրության սկզբունքը դառնալու է ջահ, որ լուսավորելու և բացատրելու է մարդու առաջացման առեղծվածը: Սակայն այդ ջահը, լույս տալու փոխարեն, բոցավառեց վառոդի տակառը: Ինքնագոհ ու ինքնահավան բրիտանացիները չէին ուզում հաշտվել ու հավատալ, որ մարդիկ ինչ-որ ժամանակ ուրիշ տեսք ու կերպարանք են ունեցել, և որ նեանդերթալյան մարդը եղել է իրենց նախնին (ի դեպ, նեանդերթալյան մարդու կմախքը հայտնաբերվել է հենց այդ ժամանակ):

Վիեննական թերթերից մեկում 1882 թվականին տպագրված ծաղրանկարում կապիկները սգում են իրենց բարերար Չարլզ Դարվինի մահը... «Դարվինն այլևս չկա,-ողբում են կապիկները.- այսուհետ ո՞վ է պաշտպանելու մեր իրավունքները»:

Գրեթե բոլոր նրանք, որ հանդես եկան էվոլյուցիոն տեսության դեմ, պարզապես չէին հասկացել Դարվինին և համոզված էին, թե նա ապացուցում է, որ ժամանակակից մարդն անմիջականորեն առաջացել է կապիկից:

Անգամ անգլիական պետական գործիչ Բենջամին Դիզրայելին, որ լայնախոհ ու չափազանց զարգացած մարդ էր, նույնպես համակվեց ընդհանուր թյուրիմացության այդ վարակով և ասաց. «Ըստ Դարվինի, մարդը կամ կապիկ է, կամ՝ հրեշտակ: Ես, օրինակ, կգերադասեի իմ «հրեշտակային նախասկիզբը»:

Ի դեպ, էվոլյուցիոն տեսության շուրջ վեճերը շարունակվում են նաև այսօր. 1972 թվականին կրթության գործերով Կալիֆոռնիական խորհրդում բուռն վեճեր առաջացրեց այն պահանջը, որ երեխաներին պետք է ծանոթացնել ոչ միայն

1876 թվականին հրապարակված ծաղրանկարում կապիկը խնդրում է ընկերուհուն, կտրել իր պոչը: Նա շտապում է օր առաջ մարդ դառնալ:

Դարվինյան էվոլյուցիոն տեսության, այլ նաև մարդու աստվածային արարման աստվածաշնչյան վարկածի հետ: Այս առաջարկը մերժվեց, սակայն խորհուրդը միաժամանակ առարկեց էվոլյուցիոն տեսության անվերապահ ընդունման դեմ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

Երբ չարաշահում ես ջուրը

Ռուսաստանում վաղուց հայտնի էր, որ օրական մեկ դույլ ջուրը մահացու է: Վերջերս սույն ճշմարտությանը հասու եղան նաև ամերիկացիները: Իհարկե, այն բանից հետո միայն, երբ ջուր շատ խմելու պատճառով այս աշխարհին հրաժեշտ տվեցին Միացյալ Նահանգների բանակի երեք նորակոչիկ զինվորներ:

Հիմա արդեն փաստված է, որ եթե օրը խմում են 10 լիտրից ավելի ջուր, կամ ժամում մեկ լիտրուկեսից ավելին, մարդկային օրգանիզմը չի կարողանում ազատվել ավելցուկ հեղուկից: Այս հանգամանքը հանգեցնում է ուղեղի այտուցման և արագահաս մահվան:

Մի՞թե...

Բրիստոլի համալսարանի հետազոտողները հաստատել են, որ փնթի, անլվա երեխաները ավելի քիչ են հիվանդանում ասթմայով և էկզեմայով: Պարզվում է, որ երբ երեխան աղտոտվում է, նրա օրգանիզմը ենթարկվում է վարակների և բակտերիաների գրոհի: Սույն պարագայում գործի է անցնում օրգանիզմի պաշտպանական մեխանիզմը, և մանկան իմունային համակարգը հարկադրված սովորում է աշխատել ու մարզվել: Միևնույն ժամանակ, ինչպես գտնում են գիտնականները, չափազանց մեծ հոգածությունը երեխաների հիգիենայի և ստերիլ միջավայր ստեղծելու համար, թուլացնում է երեխաների իմունային համակարգը, և նրանք ավելի հաճախ են ենթարկվում տարբեր հիվանդությունների:

Ծեծելու վնասների մասին

Կոլումբիական համալսարանի գիտնականները բացարձակ ճշտությամբ պարզել են, որ երեխաները ագրեսիվ են դառնում և մեծանում չար մարդիկ, երբ փոքր ժամանակ նրանց պատեհ-անպատեհ ծեծում են:

Բացի ագրեսիվությունից, նման երեխաներին հետագայում բնորոշ է դառնում հակահասարակական վարքագիծը, և նույիսկ՝ նրանք կարող են դառնալ մտավոր հետամնացներ:

ՄԵԾԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Դժո՞խք, թե՞ դրախտ

Մի անգամ աշխարհահռչակ Չապլինին հարցրին. «Ո՞ւր կուզենար նա ընկնել մահվանից հետո՝ դրա՞խտ, թե՞ դժոխք»:

- Գիտեք, բարդ հարց է, միանգամից դժվար է պատասխանել,- ասաց Չապլինը: - Կլիմայի տեսակետից առավելությունը, իհարկե, դրախտի կողմն է: Իսկ եթե հարցին մոտենանք լավ շրջապատ ունենալու տեսակետից, ապա, կարծում եմ, պետք է ընտրել դժոխքը:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.05.2018 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА